

2376

5940



117
/

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՇՈՒՈՑ ՔՆՆԻՉ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՑ

ՄԱՏՈՒՑՈՒԱԾ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎԻՆ

1909 Մայիս 22ի ԻԱ. Ախսիկ



Կ. ՊՈԼԻՍ

ՏԳԱԿՐ. Յ. ԱՍՏՑՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԿԻՔ

1909

13776

2376

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր
Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ Ի Հ Ա Շ Ո Ւ Ո Յ Ք Ն Ն Ի Չ
Խ Ո Ր Հ Ր Դ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն Յ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ

Մ Ա Տ Ո Ւ Ց Ո Ւ Ա Ծ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Ր. Ե. Ս. Փ. Ժ. Ո. Ղ. Ո. Վ. Ի. Ն.

1909 Մայիս 22ի ԻԱ. Ախսիկ



Բարձրագնորհ Տեղապահ Ա. Հայր, Նախագահ

Տիար Ա. Տեմապետ Ազգ. Երեսփ. Ժողովոյ

Երեսփոխան Հարկ եւ Տեսրկ,

Պատկառելի Ժողովոյդ 1908 Դեկտեմբեր 5ի 10րդ նստին մէջ ընտրեալ Երուսաղիմայ հաշուոց Գննիչ Յանձնաժողովս՝ Ամենապատիւ Տ. Մատթէոս Իզմիրեան Արքեպիսկոպոսի, Կ. Պոլսոյ Պատրիարքին, 8 Դեկտ. 1908 թուական գրութեամբ ի պաշտօն հրաւիրուած և 23 Դեկտ. 1908ին իւր աշխատութեանց սկսելով իւր քննութիւնն աւարտած՝ կողգայ ներկայացնել իւր Տեղեկագիրը Պատ. Ժողովոյդ:

Յանձնաժողովոյս եօթն անդամներէն Երուանդ էֆ. Գարսեան առաջին մէկ քանի նիստերուն միայն ներկայ գտնուելէն վերջ իւր անձնական տկարութեանը պատճառաւ հրատարականը մատուցած է և անոր տեղ ուրիշ անդամի մը ընտրութիւնը կատարուած չ'ըլլալով՝ վեց անդամներ միայն աշխատակցած են և ներկայ Տեղեկագիրս իւր եզրակացութիւններով միաձայնութեամբ ընդունած և ստորագրած են:

Խնդրոյն կնճռոտ հանգամանքը և լուսաբանութեան կարօտ բաղմամբ իւր քննելի կէտեր երկարեցին Յանձնաժողովոյս աշխատութիւնը, որ սակայն կրնար աւարտած ըլլալ

աւելի կանուխ՝ եթէ ծանօթ քաղաքական դէպքեր վրայ հասած չ'ըլլային:

Թէպէտ և իւր քննելիք հաշուոց ո՛ր թուականէն ո՛ր թուականը լինելը իրեն պաշտօն տուող Ազգ. Պատկառելի Ժողովդ չէ սահմանած, սակայն խնդրոյն ընդարձակութիւնը, պարագաները և մասնաւորապէս այս քննութեան պատճառները ու օրինական հանգամանքները նկատի առնելով՝ Յանձնաժողովս կարծեց իրաւունք ունենալ իւր քննութիւնները տարածելու նաեւ այն հաշիւներուն վրայ որոնք չ'էին վաւերացած տակաւին Պատկ. Ժողովէդ ըստ օրինի, ինչպէս նաեւ կարծիք յայտնելու այնպիսի գործողութեանց վրայ որոնք թերեւս վաւերացեալ հաշիւներու թուականներուն մէջ տեղի ունեցած են և որոնց մասին անկարելի էր լռելեայն անցնիլ:

Ոչ-վաւերացեալ հաշիւները կը վերաբերին 1893—1905 երկուստասանամեայ շրջանին ինչպէս նաեւ 1905—1908 եռամեայ վերջին շրջաններուն:

Յանձնաժողովս իւր աշխատութեան և քննութեան հիմ ունեցաւ պաշտօնաթուղթեր, հաշուետետրեր, տեղեկագիրներ և վաւերա-

13776

Թուղթեր որք պաշտօնապէս իրեն յանձնուեցան Ազգ. Պատրիարքարանէ, ընդ որս Երուսաղիմայ Միաբանութեան Տնօրէն Ժողովոյ ատենագրութիւնները, Կ. Պոլսոյ մէջ կազմեալ 1905ի Հաշուեքննիչ Յանձնաժողովոյ Տեղեկագիրը, 1907ին Երուսաղիմայ մէջ կազմեալ Յանձնաժողովոյ Տեղեկագիրը, 1908ին Ատենապետաց Մասնաժողովոյ տեղեկագիրը: Լսեց նախկին Ելեւմտից Տեսուչ Գեորգ. Ս. Ղեւոնդ Վրդ. Մագսուտեանի գրաւոր կամ բերանացի բացատրութիւնները. քաղեց տեղեկութիւններ Կ. Պոլսոյ Երուսաղիմատունէն և Երուսաղէմի Կ. Պոլսոյ նախորդ Փոխանորդ Գեորգ. Ս. Գէորգ Արքեպիսկոպոսէ: Յանձնաժողովս կը ցաւի որ չ'կրցաւ օգտուիլ վերջերս Երուսաղէմ ղրկուած Վարչական Պատուիրակներէ ակնկալեալ լրացուցիչ տեղեկութիւններէն՝ անոնց ստիպեալ ապարդիւն վերադարձին պատճառաւ:

Տեղեկագիրս կը բաժնուի 7 որոշ մասերու.

1. — Կանոնական դիտողութիւնք.
2. — Մատակարարութիւն 1893-1905 երկուսասնամեայ շրջանի.
3. — Նոր շինութիւնք.
4. — Գնեալ և վաճառեալ կալուածք.
5. — Պահեստի սնտուկ.
6. — Եռամեայ մատակարարութիւն 1905-1908 եռամեայ շրջանի.
7. — Եզրակացութիւն:

1. — ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Երուսաղիմայ Միաբանութեան իրաւունքն ու պարտականութիւնը օանմանող և ի գործադրութեան եղող Կանոնագիրն, որ հաստատեալ է 1888 Մարտ 18ի Ազգ. Ժողովոյ նիստէն՝ գրեթէ բնաւ յարգուած չ'է իւր տրամադրութեանց ամբողջութեան մէջ, և Յանձնաժողովս հաստատեց թէ հետեւեալ մէկ քանի յօդուածները բնաւ գործադրուած չ'են և ուրիշներ ալ չարաչար մեկնուած են:

Կանոնագրին Տրդ յօդուածը կ'ըսէ

Յօդ. 8. — Միաբանք ազատ են իրենց անձնական դրամով իրենց անձին յատուկ անուամբ կալուած գնելու կամ կառուցանելու, միայն թէ այդ կալուածն եթէ վագրձ գեթին է, պէտք է պահանքի մի միայն և անպատճառ Երուսաղիմայ վագրձին, իսկ եթէ գուտ (սրբ) միւլ է՝ միաբանք պարտին նախապէս նեճի

միւլի հեօնեթով կամ օրինաւոր վագրձիով վանքին վագրձ ընելով հաստատել ըստ սիրող օրինաց Տերութեան՝ թէ յետ մահուան Ս. Երուսաղիմայ Արքուն միակ ժառանգն ու սեքն է այդ կալուածի: Եթէ միաբանք ուզեն անուամբ կալուած գնել կամ կառուցանել՝ կը պարտաւորին կանխաւ զեկուցանել Ս. Արքուն և կասարել վերոնշարտեալ օրինական գործողութիւններն. հակառակ պարագային պարտագանց կը նկատուին և ըստ այնմ պարտ ու պատճառ կը սնօրինուի:

Այս յօդուածը չ'է գործադրուած:

Ո՛չ միայն միաբանք իրենց գնած կամ կառուցած կալուածները չ'են զեկուցած Ս. Աթոռոյն, այլ և Երուսաղիմայ վագրձ ըրած ըլլալին ալ անձանթ է: Միայն այն կալուածները որ միաբաններու դրամով Երուսաղիմայ հողերուն վրայ շինուած և իւր շէնքերուն մաս կազմած են՝ միաբաններու որոշ ապահովագիր տրուելով Տնօրէն Ժողովէն անցած են:

Յօդ. 19. — Որ եւ է միաբան թէ՛ վանքին մէջ եւ թէ՛ դուրս օտար երկիր վախճանած ժամանակ բոլոր գոյքը ի գիր կառուցին եւ հաշիւները տեսնելով կը կարգադրուին Տնօրէն Ժողովոյ միջոցաւ:

Յօդ. 20. — Վախճանեալ միաբանից օրինաւոր ժառանգն Ս. Արքուն ըլլալով՝ անոնց գոյքն Ս. Արքուն և այլոց վերաբերեալ եւ պատահապէս իրենց քով գտնուած դրամ, աւօթ, զգեստ, գոյք եւլյն. իրենց տեղը յանձնուելով, ի՛նչ որ աւելնայ Ս. Արքուն կ'անցնի կանոնաւոր արձանագրութեամբ ի յիշատակ անուան նորա: Միեւնոյնը կը գործադրուի նաեւ Լուսարարապետի մահուան ատեն նորա սենեակի եւ սեփական գոյքից նրկատուամբ, սակայն անմիջապէս՝ ըստ սովորութեան՝ Տնօրէն Ժողովոյ միջոցաւ Ս. Յակոբայ Աւանդասան դուռը կը կնքուի եւ բանալիները կնքոյ ներքեւ կը պահուին մինչեւ ց'ընտրուին եւ հաստատուին նոր Լուսարարապետի: Իսկ Պատրիարքի վախճանման ատեն, վախճանելոյն եւ Պատրիարքարանի գոյքից քննութիւնը Միաբանական Ընդհ. Ժողովով ընտրեալ Քննիչ Մասնախումբի մը գործակցութեամբ կը կատարուի:

Հարկ կա՛յ ըսելու թէ այս Յօդուածը չ'է յարգուած:

Համարատուութիւնը տարիներէ ի վեր չ'է եղած և Ազգք քանի քանի անգամներ ինքզինքը գտած է վանքին ահագին պարտուց առջեւ. պարտքեր՝ որոնց չ'է թէ ինչպէս գոյացած ըլլալը չ'է գիտցուած՝ այլ և չ'է կարելի եղած ճիշդ գումարը որոշել:

Յօդ. 28. — Տնօրէն Ժողովը կը կազմուի Լուսարարապետէն՝ որ անփոփոխ անդամ է եւ պարբերաբար փոփոխելի վեց անդամներէ:

Յօդ. 29. — Տնօրէն Ժողովոյ անդամ չորս սարի պատճօն վարելու պայմանաւ կ'ընտրուին Միաբանական Ընդհ. Ժողովէն, առա-

Սյս յօդուածները կատարելապէս գործադրուած չ'են:

Յանձնաժողովս ստուգեց որ Միաբանից վախճանման ատեն Տնօրէն Ժողովոյ առջեւ հաշուց կարգադրութեան ձեւակերպութիւն մը կատարուելէ վերջ, բաց ի պատրաստ դրամէն՝ մնացեալ գոյք, ինչպէս արժեթուղթ, խաչ, մատանի, արծաթ և ոսկի առարկայք վանքին օրինաւոր տուժարաց մէջ չ'են արձանագրուած, և մասնաւորապէս միաբաններէ մնացած Բուժէլիի երկաթուղեաց պարգեւաւոր արժեթուղթեր իրենց թիւերով օրինաւոր տուժարի մը մէջ չ'են արձանագրուած և եթէ նկատուի թէ ասոնց թիւը 2000է աւելի է՝ խնդրոյն կարեւորութիւնը կը հասկըցուի: Այս արժեթուղթերը վաճառուած ատեն միայն փոխարժէքները ցոյց կը տրուին սնտուկի տետրին մէջ իբր մուտք. սակայն մինչեւ այն ատեն և տարիներով բացը մնացած են: Այս մասին ունիմք խօսիլ իւր կարգին: 19րդ և 20րդ Յօդուածներու չ'է գործադրուելուն մի ուրիշ ապացոյց ալ այն է թէ՛ բազմաթիւ միաբաններու մահուանէ վերջ իրենց պատկանեալ կալուածներու վարձքեր, որ ըստ օրինի վանքին պիտի պատկանէին՝ տակաւին մէկ քանի տարիներ հասութից մէջ չ'են երեւնար: Այս մասին մեր քննութեան արդիւնքը մանրամասն կերպով կը տեսնուի թիւ մը վարը:

Յօդ. 21. — Մերոց Յակոբեանց Առաքելական Արքուն վարչութիւնը յանձնուած է Երուսաղիմի Ս. Պատրիարքին, որ կը գործէ օրինաց սահմանին մէջ ըստ սրամարտութեան սոյն կանոնագրոյ՝ աշակցութեամբ Միաբանութեան: Պատրիարք եւ միաբանութիւն համարաւու են առ Ազգն, Կ. Պոլսոյ Երեսփոխանական Ժողովոյն միջոցաւ:

Հարկ կա՛յ ըսելու թէ այս Յօդուածը չ'է յարգուած:

Համարատուութիւնը տարիներէ ի վեր չ'է եղած և Ազգք քանի քանի անգամներ ինքզինքը գտած է վանքին ահագին պարտուց առջեւ. պարտքեր՝ որոնց չ'է թէ ինչպէս գոյացած ըլլալը չ'է գիտցուած՝ այլ և չ'է կարելի եղած ճիշդ գումարը որոշել:

Յօդ. 28. — Տնօրէն Ժողովը կը կազմուի Լուսարարապետէն՝ որ անփոփոխ անդամ է եւ պարբերաբար փոփոխելի վեց անդամներէ:

Յօդ. 29. — Տնօրէն Ժողովոյ անդամ չորս սարի պատճօն վարելու պայմանաւ կ'ընտրուին Միաբանական Ընդհ. Ժողովէն, առա-

չին անգամ Պատրիարքին Լուսարարապետին հետ պատրաստ կրկնաբիւ ցանկին վրայ, առաջին ընտրութենէն երկու սարի վերջը երեք անգամ վիճակաւ եւ այնուհետեւ երկու սարին միանգամ պատճօնվարութեան փառամեայ օրացնր լրացնող անդամ կը դադարին, որոց տեղ Միաբանական Ընդհ. Ժողովը նոր երեք անդամներ կ'ընտրէ՝ Ս. Պատրիարքին մնացեալ անդամաց հետ պատրաստ կրկնաբիւ ցանկին վրայ: Թէ՛ վիճակաւ եւ թէ՛ կարգաւ դադարեալ անդամ վերընտրելի են:

Այս երկու յօդուածները թերի կերպիւ գործադրուած են: Սոյն կանոնադրութեան հաստատումէն ի վեր երկու անգամ միայն Տնօրէն Ժողովոյ անդամները փոխուած են, իսկ անկէ վերջ մինչեւ 1905 Տնօրէն Ժողովոյ կանոնաւոր վերընտրութիւն չ'է եղած և հակառակ ոմանց միաբանից բողոքներուն՝ Տնօրէն Ժողովոյ անդամք չարուանկած են պաշտօնավարել: Ասկէ դատ, Տնօրէն Ժողովոյ ատենագրութիւնք երկար ամիսներ անըստորագիր մնացած են, և կը տեսնուին այնպիսի ատենագրութիւններ ալ՝ որոնց ներքեւ ստորագրած են իբր անդամ՝ ոչ-անդամ միաբաններ. այսպէս օրինակի համար 1898էն մինչեւ 1900 ապրիլ, ատենագրութիւնները կ'ստորագրէ Եղիա Վրդ. Յովհաննէսեան իբր դիւանի անդամ, մինչդեռ ինքն այդ թուականներուն այդպիսի պաշտօն մը չ'ունէր:

Յօդ. 30. — Տնօրէն Ժողովը կանոնաւորապէս շաբաթը երկու, իսկ սոխողական հարկին՝ աւելի նիստ կ'ընէ, ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարքին եւ ի բացակայութեան՝ Պատրիարքական փոխանորդին. Ժողովը կ'առաջնորդուի իւր Դիւանէն՝ կազմեալ մեկ Ասեմապետ եւ մեկ Ասեմադարէ, զորս իւր մէջէն կ'ընտրէ երկու սարի պատճօն վարելու պայմանաւ:

Այս յօդուածը յայտնապէս բռնաբարուած է. Գեորգ. Ս. Ղեւոնդ Վրդ. Մագսուտեան անընդմիջաբար տարիներով և մինչեւ վերջը Ատենապետի պաշտօնը վարած է՝ առանց վերընտրուելու:

Յօդ. 31. — Տնօրէն Ժողովոյ պատճօնն է հաւանութեամբ Ս. Պատրիարքի՝ Ս. Արքուն պատճօնատարաց կողմէ ներկայացնուած նդաւոր եւ ծանրակշիռ գործեր սնօրինել, նախապէս ստանալով անոնց կարծիքը եւ դիտողութիւնները: Ասորակարգեալ պատճօնից ընտ-

րութիւնները կասարել: Վարչական հրահանգները եւ սնօրինութիւնները սահմանել: Եւ ի մի բան սնօրինել այն ամէն գործեր որք իւրաքանչիւր պաշտօնատարի իրաւասութեան վեր կը դասուին: Նոյնպէս Տնօրէն ժողովոյ պաշտօնական կը պահպանի, հաւանութեամբ միտք Ս. Պատրիարքի, Ս. Արքուոյ վարկը պահելու համար ի հարկին փոխառութեանց պէտքն ու պայմանները սահմանել, կալուածական գնում եւ վաճառում ընել, միաբանից ընդունելութիւնը որոշել, ամբաստանութիւններ քննել, հրաժարում վճել, աստիճանի բարձրացման արժանաւորութիւնն (բաց ի նպակապոսներէ) որոշել, եւ ի դէպս մահուան՝ միաբանից սեփական գոյից վրայ կանոնական տրամադրութիւնն ի գործ դնել:

Այս յօդուածը անտեսուած է:

1900ին Տնօրէն ժողովը կարտօնէ Ելեւմըտից Տեսուչը 5էն 10,000 Օամ. լիբայի փոխառութիւն մը կնքել պահեստի սնունդի համար. այս երկտող որոշման մէջ ոչ գումարը էապէս ճշդուած է, ոչ պէտքը հաստատուած է և ոչ պայմանները սահմանուած են. և ասոր յոռի հետեւանքը յայտնի է և պիտի պարզուի ի ստորեւ: Նոյնպէս կալուածական գնումներ և վաճառումներ և նոր շինութիւններ տեղի կունենան առանց Տնօրէն ժողովոյ որոշման կամ վաւերացման, ինչպէս պիտի տեսնուի:

Յօդ. 32. — Տնօրէն ժողովը ամէն ամսազուլիս պաշտօնէից հաշիւները կը քննէ, չորս ամիսն անգամ մը Ս. Արքուոյ ելեւմից վիճակն ստուգելով հարկաւոր սնօրինութիւններ կ'ընէ, ամէն տարեզուլիս անցելոյն հաշիւները կը փակէ եւ յաջորդին Ելեւմացոյցը կանխաւ յարդարելով բացատրական տեղեկագրութեամբ կը ներկայացնէ Միաբ. Ընդհ. ժողովոյ:

Այս յօդուածը մեռեալտառ մնացած է:

Այստաղլիսոյ հաշիւները վեր ի վերոյ և ձեւապէս քննուած են. քառամսեայ հաշիւն չէ շինուած. իսկ տարեկան հաշիւները, հակառակ բաղմաթիւ միաբաններու գրաւոր բողոքներուն, տարիներով չեն մատուցուած: Գալով Ելմտացոյցի, 14 տարի առաջ պատրաստուած է միանգամ ընդ միշտ՝ և առ ի չգոյէ յաջորդներու՝ ժամանակին հաշուեքննիչները պարտաւորուած են ատկայ հիմբանել իրենց բաղդատութեան:

Յօդ. 33. — Տնօրէն ժողովը համարատու է առ միաբանական Ընդհ. ժողովն, որ կը կասարէ համարատուութիւն տարեկան տեղեկագրութեամբ, որոյ մէջ խնամով պիտի նշանակէ:

Ա. — Միաբանական անդամոց ընդունելութեան, պաշտօնավարութեան հաւատարմ ծառայութեանց համար եղած վարձատրութեանց, ձեռնադրութեանց, հրաժարման եւ մահուան վերաբերեալ տնօրէնութիւնն:

Բ. — Միաբանական անդամոց ուսումնական յառաջդիմութեան եւ ընդհանրապէս Ազգային դաստիարակութեան նկատմամբ գործադրութեան միջոցները եւ արդիւնք նոցին:

Գ. — Տնօրինական Ս. Տեղեաց եւ այլ ուխտաստեղեաց մէջ օտարաց հետ ընկերովի եւ առանձինն Ազգային արտօնութեանց եւ սեփականութեանց մասին պատահած նշանաւոր դէպքերն եւ ասոնց նկատմամբ Ընդ Ազգ. Կեդր. Վարչութեան, ընդ տեղական կառավարութեան, ընդ Բրիտանաց օտարագրիս, եւ ուղղակի ընդ Նախարարս Տեղութեան կամ այլ պաշտօնակալս տեղի ունեցած յարբերութիւնք եւ արդիւնք նոցին:

Դ. — Բոլորեալ տարւոյն Ելմական ներքին վիճակն բաղդատմամբ երթադրեալ ելմացոյցի եւ ի մասնաւորի փոխառութեանց եւ կալուածական գնմանց եւ վաճառմանց եւ պարտուց վճարման նկատմամբ ի գործ դրուած միջոցներն եւ արդիւնք նոցին:

Ե. — Յաջորդ տարւոյն երթադրեալ Ելմացոյցն եւ Ելեւմից հաւասարակշռութեան համար որոշուած միջոցները:

Այս յօդուածին Դ. և Ե. մասերը, որք մանաւանդ հաշուական գործին կը վերաբերին՝ ընաւ չեն գործադրուած:

Յօդ. 34. — Տնօրէն ժողովոյ անդամք չեն կրնար ստանձնել այն պաշտօնները որք իրենց համարատուութեան ներքեւ կը գտնուին ինչպէս նաեւ չեն կրնար միանգամայն Տնօրէն ժողովոյ անդամ եւ Ընդհ. ժողովոյ Ատենապետ գտնուիլ: Իսկ եթէ երբեք ստանձնեն այնպիսի պաշտօն, կը դադրին նոյն միջոցին Տնօրէն ժողովոյ անդամակցութեան:

Այս յօդուածը ոչ միայն չէ յարգուած՝ այլ և չարաչար մեկնուած է: Կանոնադրին 47րդ յօդուածը կ'ըսէ թէ. Ելեւմից Տեսուչը կ'ընտրուի Տնօրէն ժողովին եւ համարատու է նմա: Արդ քանի որ համարատու է՝ չէ կա-

րող Տնօրէն ժողովոյ անդամ ըլլալ. մինչդեռ Գեր. Ս. Ղեւնդ Վրդ. Մազտուտեան Ելեւմըտից Տեսուչ ըլլալով հանդերձ՝ չէ թէ միայն անդամակցած է Տնօրէն ժողովոյ, այլ նաեւ նոյն ժողովոյ յաւիտեակական Ատենապետն եղած է: Այս մասին Յանձնաժողովս լսելու չէ իւր բացատրութիւնները. Ս. Ղեւնդ Վրդ. ընդունելով հանդերձ թէ իւր կրկնակ պաշտօնավարութիւնը անհամաձայն է կանոնադրին՝ ըսաւ թէ ինքն փափաքող չէ եղած և թէ քանիցս ալ հրաժարական մատուցած է առ Ս. Յարութիւն Ս. Պատրիարքն, սակայն միշտ մերժուած է իւր հրաժարականը, եւ այլն: Բայց այս Յարդ յօդուածին նկատմամբ իւր առարկութիւնն այն է թէ՛ հակասական է այն, շարք յօդուածին հետ, ըստ որում այս վերջին յօդուածը կ'արտօնէ լուսարարապետին անդամակցութիւնը Տնօրէն ժողովոյ, և թէ՛ այդ Յարդ յօդուածը 1888ին Ազգ. Երեսփ. ժողովը աւելցուցած է՝ առանց միաբանութեան հաւանութեանը:

Օրէնքին այս կերպ մեկնութիւնը Ս. Ղեւնդ վարդարպետի կողմանէ, շատ չը հաշտուիր իւր յաճախ հրաժարական տուած ըլլալուն յայտարարութեան, և Յանձնաժողովս միշտ այն համոզումն ունի թէ՛ Հայր Սուրբն իւր պաշտօնավարութիւնը յաւէտ պարտադրած է Երուսաղիմայ վարչութեան վրայ՝ որ իր կարգին միամիտ հիացող մ'եղած է նորա գործունէութեան:

Յօդ. 37. — Ընդհ. ժողովը (միաբանութիւն) կը գումարուի:

Ա. — Կանոնաւորապէս ամէն տարեզուլիս (Մայիս) Տնօրէն ժողովոյ համարատուութիւնը առնելու եւ առ Ազգ. Երեսփ. ժողովն իր համարը տալու:

Յօդ. 41. — Ամէն տարեզուլիս միաբանական Ընդհ. ժողովը Տնօրէն ժողովոյ համարատուութեան տեղեկագիրը եւ Ելմացոյցն ընդունելով ստուգելի եւ վաւերացնելի յետոյ իւր կողմէն համարատուութեան տեղեկագիր կուղղէ առ Ազգ. Երեսփ. ժողովն, մի առ մի նշանակելով ի նմին 33 յօդուածին տրամադրութեան համաձայն տարւոյն մէջ կատարուած վարչական, սնեստական, ելմական, բարեկարգական սնօրինութիւնք, ինչպէս նաեւ վերջացեալ տարւոյ հաշուեկիտին:

Յայտնի է թէ այս յօդուածը չէ փորձուած իսկ գործադրել:

Յօդ. 42. — Լուսարարապետին պաշտօնն և Ս. Տնօրինական Ս. Տեղեաց եւ այլ ուխտաստեղեաց եւ բոլոր եկեղեցեաց մէջ Աստուածային պաշտման բոս կանոնաց տեղեկացուց կատարուելուն վերաստիչութիւնը եւ Բ. — Ս. Արքուոյն սեփական բոլոր եկեղեցական անօրոց, զարդուց, զգեստուց, զգեանց, եւ այլ կանոնց եւ կարասեաց անկորուստ եւ անեղծ պահպանութիւնը:

Յօդ. 44. — Ս. Արքուոյ Աւանդատան մէջ ինչպէս նաեւ զանազան ուխտաստեղեաց եւ Ս. Տանարաց մէջ գտնուած բոլոր եկեղեցական անօրոց, զարդուց, զգեստուց, զգեանց եւ այլ կանոնց եւ կարասեաց մանրապատմ մայր տուարն Ս. Արքուոյ Աւանդատան մէջ պահուելով Լուսարարապետն Ընդհ. ժողովով ընտրուելին եւ սովորական արարողութեամբ Աւանդատան բանալին Ս. Գլխադիրէն իւր ձեռք առնելէ ետք, նոյն տուարն Աւանդատան վիճակին հետ բաղդատելով, անոր մէջ կ'արձանագրէ իւր դիտողութիւնքն եւ կատարագրէ:

Այս ամէնակարեւոր յօդուածը երբեք չէ՛ գործադրուած և թէպէտ Յանձնաժողովս ի վիճակի չէ հաստատելու այն անախորժ զբոյցները թէ ժամանակ առ ժամանակ վստահութեան զեղծում եղած և թանկագին առարկաներ կամ հազուադէպ ձեռագիրներ աներեւութացած են, սակայն չէ կարող ալ հերքելու զանոնք՝ հիմնուելով վաւերական ու է տօխումանի վրայ. տեղական խիստ քննութիւն մը միայն կրնայ լուսաբանել այս խնդիրը: 1833էն մինչեւ 1860 թուականը մեծ գումարներ աւելցած են մատակարարութեանն և Յանձնաժողովոյս հաղորդուած ցուցակէ մը կերեալ թէ 2,069,769 դրուչի արժէքով պատրաստ դրամ, իբր պահեստ, դրուած էր 35 ծրարով Գանձարանին մէջ՝ Սասիլի Պատրիարքին ընտրութեան միջոցին. այս գումարը յատուկ ցուցակագրութեամբ յատկացուած էր Վանքին տարապայման դրամական անձկութեան միջոցին և եթէ ծախսուելու և կամ ծանր պարտուց պատահականութեան պարագային տրամադրելի էր ըստ այն պայմանագրութեան զոր նախորդ Պատրիարքներ երդմամբ պարտադրել են իրենց յաջորդներուն. և սակայն այս դրամը չհանցնելու պատրուակին տակ մաս առ մաս կը մտնուի:

Յօդուածք 47. 48. 49. 50. 51. 52 և 53. կը վերաբերին Երևմտից տեսչին պաշտօնավարութեան, և զորս աւելորդ կը համարիմք մի առ մի յառաջ բերել հոս. այդ յօդուածները կը սահմանեն անոր պաշտօնը և կը մանրամասնեն թէ ինչպէ՛ս պարտի հըսկել ըլլոր պաշտօնակալաց ձեռք կատարուած գործողութեանց, թէ՛ ինչպէս հաշիւ պիտի առնէ անոնցմէ և ինչպէս իւր կարգին հաշիւ պիտի տայ և վերջապէս թէ ինչպէ՛ս պիտի համեմատէ իւր գործառնութիւնները որոշեալ Երևմտացոյցին հետ ելլին. — Այս բոլոր յօդուածները չեն գործադրուած քանի որ — կը կրկնեմք — ո՛չ Երևմտացոյց կար ո՛չ մատուցեալ հաշիւ և ոչ հետեւաբար, պատասխանատուութիւն:

Իսկ թէ Գեր. Ղեւոնդ Վրդ. Մագսուտեան ինչպէ՛ս կատարած է իւր Երևմտական Տեսչի պաշտօնը՝ պիտի տեսնուի յաջորդ գլխոց մէջ. միայն իսկոյն ըսեմք թէ Յանձնաժողովոյս ներկայացեալ Վանուց հաշիւները չունին այն համբաւեալ հաշուակալութեան պայմանները որոնք կը վերագրուին նախորդ Երևմտական տեսչին. կրկնատուար անուան տակ կատարեալ քառասյին տոմարակալութիւն մըն է եղածը, անհրաժեշտը, կարեւորը կը պակսի հոն շատ անգամ, իսկ ձեւերը կը փրկուին միշտ: Ո՛չ մէկ տոմար ստացեալ արժեթղթոց (valeurs acquises) արժէքն ու թիւերը ցուցնող. ո՛չ մէկ տոմար կալուածական վարձքերէ Վանքին պահանջքը ցուցնող, ոչ մէկ տոււար անշարժ կալուածոց արժէքը ցուցնող, ոչ մէկ տեսարմաբաններէ ստացուած դրամներու կամ անոնց վճարուած կալուածական վարձուց. ո՛չ մէկ արձանագրութիւն նոր չինութեանց 34000 լիրայի ծախուց մանրամասնութիւնը պատկերացնող: Արդեօք պաշտօնական տոււարներէն զատ առանձինն հաշուակալութիւն մը ունեցած է Երևմտից Գեր. Տեսուչը, քանի որ կառարկէ թէ այդ ամէնը կամ շատերը ունէր, բայց ժամանակ չէր ունեցած կարգի դնելու, իւր բառերով իսկ: Գոնէ Յանձնաժողովս չը տեսաւ այդ տոււարները, եթէ կային Տ. Ղեւոնդ Վարդապետին քով: Վճարմանց փոխարէն արդարացուցիչ թուղթեր (pièces justificatives) ստանալու դրութիւն չէ եղած. պաշտօնէից կողմանէ ներկայացած ծախուց հաշիւները առանց հակառի կընդունուէին և կը վճարուէին:

տեսչութիւններէ և գործակալութիւններէ հասած հաշիւները նոյնպէս անպայման կ'ընդունուէին և կարձանագրուէին, չէ՛ մի որ վանականք մէկ ընտանիքի մը պէս իրարու նըկաթամբ կոյր վստահութիւն ունէին, ինչպէս կը յայտարարէր Յանձնաժողովոյս առջեւ Երևմտից նախորդ տեսուչն այն հարցման թէ ինչո՞ւ հակակշիռ և քննութիւն զանց կ'առնուէին:

Իսկ թէ գործակալութեանց և տեսչութեանց առանձինն հաշուակալութիւնը ո՛ր աստիճան օրինաւոր եղած է, այդ անձանօթ կը մնայ Յանձնաժողովոյս՝ բացի Պօլսոյ Փոխանորդարանի հաշիւներէն զորս պատեհութիւն ունեցաւ Յանձնաժողովս տեսնելու և որոնք միեւնոյն խառնակ վիճակին մէջ կը գտնուին:

Վարչականին և կանոնականին մասին այս քանի մը ընդհանուր դիտողութիւններէ յետոյ, անցնինք բուն հաշուական քննութեանց:

2. — ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այս անուան տակ ամփոփուած են քսան և վեց հաշուեզուլուիներ.

1. — Երուսաղիմայ միաբանութեան բաժին.
2. — Հանդերձատուն.
3. — Միաբանական տարեկանք.
4. — Դեղարան.
5. — Տպարան.
6. — Ս. Յակոբ.
7. — Ս. Աստուածածին.
8. — Ս. Յարութիւն.
9. — Ս. Ծննդոց վանք.
10. — Ժամուցք.
11. — Կ. Պօլսոյ Փոխանորդարան.
12. — Յոպպէի վանք.
13. — Պէյրութի վանք.
14. — Դամասկոսի վանք.
15. — Ռէմլէյի վանք.
16. — Պատրիարքարան.
17. — Ճանապարհորդութիւնք Ս. Պատրիարքի.
18. — Դիւանատունք.
19. — Թարգմանատուն.
20. — Երթեւեկութիւնք.
21. — Պարգեւք.
22. — Նպաստք.
23. — Ուխտաւորք.
24. — Դպրոցք.
25. — Նուիրատուութիւնք.
26. — Ընդհ. կալուածք յԵրուսաղէմե ի զանազան գաւառս.

Որոց համար 12 տարուան միջոցին ծախուած գումարն է՝ Լիրա Օսմ. 102,715 (տե՛ս վիճ. պատկեր երկոտասանամեայ ընդհ. ծախուց 1893-1905): Անմիջապէս ըսենք որ այս ամէն գումարները մի առ մի քննելով մանրազըննին կերպով եզրակացութեան մը հասնիլ Յանձնաժողովոյս համար եթէ ոչ անկարելի՝ գէթ ամենադժուար էր. ուստի և պիտի բաւականանանք վեր առնելով այն մէկ քանի հաշուեզուլուիները, որոց քննութիւնը շահեկան է. և որովհետեւ 1895-1905 տարիներու մէջ բնաւ ո եւ է Երևմտացոյց (պիւտճէ) չէ պատրաստուած, որպէս զի կարելի լինէր բաղդատութեան եզր մը գտնել եղած ծախուց առաւելութիւնը կամ նուազուած ցոյց տալու համար, ուստի Յանձնաժողովս հիմ բռնած է 1907-1908 տարեշրջանի համար պատրաստեալ և միաբանական Ընդհ. Ժողովէն վաւերացեալ Երևմտացոյցը (տե՛ս խառն նիստ Ե. 2 Հոկտ. 1907 Գշ.): Արդ, այս հիման վրայ քննելով հաստատուած է թէ՛ վերոյիշեալ ծախուց գումարը Երևմտացոյցէն 18,000 ՕՍՄ. ՈՍԼԻ աւելի եղած է, ինչպէս կը տեսնուի հետեւեալ ցուցակէն:

Մատակարարութիւն	Լ. Օ.	3355	աւելի
Հանդերձատուն	»	470	»
Ս. Աստուածածնայ տաճար	»	227	»
Ս. Յարութեան	»	1193	»
Ս. Ծննդեան վանք	»	770	»
Կ. Պօլսոյ Փոխանորդարան	»	1790	»
Դամասկոսի վանք	»	280	»
Պատրիարքարան	»	182	»
Թարգմանատուն	»	138	»
Պարգեւք	»	856	»
Ուխտաւորք	»	1246	»
Դպրոցք	»	853	»
Երուսաղիմայ կալուածք	»	4235	»
Յոպպէի	»	1593	»
Դամասկոսի	»	1755	»
Բերիոյ	»	880	»
Մշակութիւնք	»	334	»
Համագումար՝ աւելի եղած ծախուց	»	20157	
Դեղարան	»	271	պակաս
Նկեղեցիք	»	949	»
Ողորմութիւնք	»	503	»
Դիւանատունք	»	419	»
Համագումար՝ պակաս եղած ծախուց	»	2142	
Մնացորդ՝ աւելի եղած ծախք	»	18015	
	»	20157	

Ա. — Երուսաղիմայ միաբանութեան մատակարարութեան (ուսեստ) ծախքը, ինչպէս կերելի ի վերեւ յիշատակեալ ցուցակէն, սովորականէն 3355 Օսմ. ոսկի աւելի եղած է, որ բացարձակ շույլութեան հետեւանք ըլլալով հանդերձ, հսկողութեան ակնբերել պակասութիւնն ալ կերելի:

Բ. — Ս. Յարութեան Տաճարին համար 12 տարուան միջոցին թէ՛ և 1193 Օսմ. ոսկիի ծախուց առաւելութիւն մը կերելի, սակայն այդ գումարին 677 Օսմ. ոսկին կարեւոր և անհրաժեշտ նորոգութեանց յատկացուած է:

Գ. — Ս. Ծննդեան Վանուց մատակարարութեան և այլ ծախքերն ալ նոյնպէս 770 Օսմ. ոսկի աւելի եղած են, որուն պատճառն ալ, դարձեալ շույլութեան և հըսկողութեան պակասի արդիւնք է:

Դ. — Չանազան տեսչութեանց գլխուն մէջ, Կ. Պօլսոյ փոխանորդարանի մատակարարութիւնը աչքառու կերպով յոռի և շընայ եղած է շարունակ 12 տարի, և կանոնազանցութեան ակնբերել իրողութիւններ երեւան եկան մեր քննութեանց ընթացքին մէջ: Եւ արդարեւ անհասկնալի է որ 2-3 հօդիէ բաղկացեալ այս փոխանորդարանին համար սահմանեալ տարեկան 250 Օսմ. ոսկին չը բաւելով, 1893 1905 երկոտասանամեայ շրջանին մէջ շուրջ 1800 Օսմ. ոսկիի գումար մը աւելի կը ծախսէ, որուն միայն 250-300ը՝ իբր արտաքոյ կարգի պատահական ծախքեր (Հիւրասիրութիւն Տ. Յարութիւն Պատրիարքի 1896ին և Սոյ Ս. Կաթողիկոսին 1904ին, հիւանդութիւն և մահ Սիմէօն Սրբազանի, ինչպէս նաև Տ. Գէորդ Երէցեանի Եպիսկոպոսացման ծախք, տե՛ս Կ. Պօլսոյ Փոխանորդարանէջ 56-57) զեղչելով, դարձեալ 1500 Օսմ. ոսկեոյ առաւելութիւն մը կը մնայ ծախուց մէջ, ինչ որ ո՛ր և է կերպով արդարացնել կարելի չէ, քանի որ հաստատուած է թէ յոռի մատակարարութեան արդիւնք է: Այս աւելի եղած ծախքերէն դուրս կը մնան նաև իբր աթոռապատկան ծախք լրագրաց ոմանց և քանի մը խմբագիրներու վճարուած 50-55 Օսմ. ոսկեոյ գումարը իբրև պարգեւ, 1902-1904 տարիներու մէջ բացի սովորական բաժանորդագիրներէ, առանց Ս. Աթոռոյ հրամանին վճարուած:

Յանձնաժողովս կը կարծէ թէ Կ. Պօլսոյ նախորդ Փոխանորդ Տ. Գէորդ Սրբազան

պարտի վերադարձնել սոյն գումարը, ցոր-
չափ չը կարենայ հաստատել այդ վճարմանց
հարկն և առ այդ արտօնուած ըլլալը. նոյն-
պէս և «Ալէլուիա» գրքին անհարկի տպագ-
րութեան համար եղած ծախքը 50 օսմ. ոս-
կի, որոյ մասին նոյնպէս արտօնեալ էր,
(Տես նամակը Տ. Յարութիւն Պատրիարքի
առ Կ. Պոլսոյ փոխանորդն Տ. Եղիշէ Ծ. Վ.
Զիլինկիրեան 4 Նոյ. և 14 Դեկտ. 1908):

Սոյն այս տեսչութեան իրաւասութեան
ներքեւ գտնուող Եփեսոս-Գոլուէի ինչպէս նա-
եւ Եալովայի ագարակներու մատակարարու-
թեան մասին Յանձնաժողովոյ քննութեանց
արդիւնքն է հետեւեալն:

1. Եփեսոս-Գոլուէի ագարակին 7 տարուան
արդիւնքը (1882-1889) 1758 լիր. օսմ. և
Արեւ. Տնտեսական Միութենէն առնուած
գումարն, որ է լիր. օսմ. 4768, այսինքն
համագումար 6526 օսմ. ոսկի յուճկէտու
վատնուած է և վանքը ուէ օգուտ չէ քա-
ղած՝ քանի որ Եալովայի ագարակին առեղ-
ծուածային բացը շուրջ 2500 օսմ. ոսկի,
1895 թուականին գոցուած է այս արդիւն-
քէն և 1287 օսմ. լիրա գումար մ'ալ դար-
ձեալ այս արդիւնքէն հանուելով վճարուած
է Արեւ. Տնտեսական Միութեան հիմնադիր
հանգուցեալ Յակոբ էֆ. Արշակի, իբր 25%
միջնորդչէք իւր համբաւեալ գործունէու-
թեան! Ս. Աթոռը ուրեմն Տնտեսական Մի-
ութենէ առնուած 4768 օսմ. լիրայի գու-
մարէն միմիայն 363 օսմ. լիրայի ջնջին ար-
դիւնքը ունեցած է, իբր փոխարժէք 30 հո-
ղային բաժնի:

Եալովայի ագարակին գալով, նոր բան
մ'աւելցուցած չ'պիտի ըլլանք յայտարարե-
լով որ երկար տարիներ յոռի մատակարար-
ութիւն մը ունեցած է և յաւէ'տ մնասա-
բեր Ս. Աթոռոյ շահուց: Կ. փոխանորդը ո՛չ
միայն չ'էին կատարած անիջական հսկողու-
թիւն ագարակին գործառնութեան Ելեւմուտ-
քին վրայ, գէթ հաւասարակաւու համար
զայն՝ այլ և իրենք իսկ զեղծումներ գործած
են ի յնաս Ս. Աթոռոյ: Արդարև Տ. Գէորգ
Եպսկ. Երէցեան յիշեալ ագարակի շահագոր-
ծումը այնչափ չարաչար կատարած է որ
գտնուած սեմիքալաւը ամբողջ ձեռքէ հանած
է, աւարկելով թէ նոր վարձակալը պէտք
չունէր ատոնց և այդ սեմիքալաւներուն ար-
ժէքը յանձնած է նոր վարձակալին. — Յան-

ձնաժողովս չը կրցաւ ըմբռնել այս անհարկի
գործողութեան նպատակը և այս մասին Ն.
Սրբազնութեան տուած բացատրութիւններն
համոզիչ ըլլալէ միշտ հեռի են:

Նոյնպէս Եալովայի խանին անհարկի
վաճառու մը հետեւանք է անհող մատակա-
րարութեան, քանի որ այդ խանը Եալովա-
յի ամենէն յարգի ծովեղերեայ տեղւոյ մը
վրայ կը գտնուէր և շատերու վկայութեամբ
չատ աւելի արժէք մ'ունէր քան ի'նչ գնով
որ ծախուեցաւ, այն է 700 օսմ. ոսկի:

Իսկ աճուրդի գործողութիւն բնաւ տե-
ղի չէր ունենար առ հասարակ ամէն վաճառ-
մանց մէջ, նոյն իսկ Երուսաղիմատան վա-
զըֆներէն մահլիւլ մնացած կալուածներու
վաճառման առթիւ, որով առարկողներ կան
թէ առանձինն համաձայնութիւններ գոյութիւն
ունեցած են: Այդ խանին այնքան աժան
ձեռքէ հանուած ըլլալուն իբր ապացոյց կըր-
նանք ի մէջ բերել սա իրողութիւնը թէ՛ նոր
կալուածատէրը՝ Կարապետ Գինոցեան այդ
խանէն մաղաղա մը և խանութ մը 300 օսմ.
ոսկիի անմիջապէս ուրիշի մը վաճառած է,
պարագայ մը զոր Յանձնաժողովս հաստատեց
Երուսաղիմատան արձանագրութեանց տո-
մարներէն...:

Դարձեալ Կ. Պոլսոյ փոխանորդարանին
տեսչութեան ենթակայ Սկիւտար վանքին
Պաղին մէջ Երուսաղիմապատկան գետնէն
1 տէօնիւմ տեղ ոմն Գողմայի ծախուած և
միայն 40 լիր. օսմ. իբր կանխավճար առ-
նուած է. յիշեալ Գողմա, առանց սոյն գետ-
նոյն գինը ամբողջապէս վճարելու, վրան
տուն մը շինած է. սոյն պարագան կուգայ
անգամ մ'ևս հաստատել փոխանորդարանի
գործոց մէջ հսկողութեան բացարձակ թե-
րութիւն կամ զանցառութիւնը. վերջապէս
անխիղճ գործունէութիւն, ինչպէս կ'որակէ
նոյն ինքն Երուսաղիմայ Ս. Պատրիարքը առ
Միաբ. Ընդհ. Ժողովն ուղղած 30 Ապրիլ
1907 թուական պաշտօնագրով որով կ'առա-
ջարկէ արտաքսել զՏէր Գէորգ Արք. Եպիսկ.
Երէցեան միաբանութենէն Ս. Երուսաղէմի,
ինչ որ գործադրուած է արդէն: Ահաւասիկ
նոյն պաշտօնագրոյն ինչպէս նաև Կ. Պոլ-
սոյ փոխանորդութիւնէն դադարման պաշտօ-
նագրերուն պատճէնները.

«Արժանապատիւ Ատենապետ
և Հոգեշնորհ անդամք Միաբ. Ընդհ. Ժողովոյ.

«Գիտէ պատուարժան միաբանութիւնդ թէ
քանի մը տարիներէ ի վեր հաշուական ծա-
նօթ խնդրոյն առթիւ այլևայլ շփոթութեանց
տեղի տրուեցաւ նախորդ ելեւմտից տեսչին
իր ամէն մանրամասնութեամբն յայտնի ըն-
թացքին հետեւանօք: Ուր ուրեմն սակայն,
չնորհիւ Կայս. Բարձր Իրատէին՝ նախորդ Ել-
եւմտից տեսչն Պոլիս տարուեցաւ ի հաշ-
ուետուութիւն առ Աղք. Կեդր. Վարչու-
թիւնն: Այս ժամանակամիջոցին մէջ մեր Կ.
Պոլսոյ փոխանորդ Տ. Գէորգ Եպսկ. Երէց-
եան՝ Տ. Ղեւոնդ Վարդապետի թեր ու թի-
կունք ըլլալով կը պաշտպանէր անոր ապօ-
րէն ուղղութիւնը ի մասին հաշուետուու-
թեան, և կը պաշտպանէր զայն և իր նըպա-
տակին համեմու համար մինչև իսկ առ Օսմ.
փառապանձ Գահն Ս. Աթոռոյս դարաւոր
և մեր բաղմամեայ հաւատարմութիւնը կաս-
կածի տակ ձգելու անխտիր ամէն միջոց կը
գործադրէր: Իրաց այս վիճակին մէջ հարկ
համարեցինք պաշտօնանկ ընել զինքը և թէ
առ Կ. Պոլսոյ Պատրիարքն և թէ՛ առ մեր
Կ. Պոլսոյ նոր փոխանորդ Տ. Եղիշէ Ծ. Վ.
Զիլինկիրեան և թէ առ ինքն Տ. Գէորգ
Եպսկ. Երէցեան ուղղեալ 7 Յունվար 1906
և 24 Մայիս 1906 թուական պաշտօնագրե-
րով և երրորդ անգամ ալ հեռագրով ազդա-
րարեցինք որ վերադառնայ ի Ս. Աթոռս,
սակայն Տ. Գէորգ Եպսկ. անսաստելով մեր
ազդարարութեան և արհամարհելով իր միա-
բանութեանս անդամակցութեան ուխտադիր
պայմաններն՝ չը վերադարձաւ. Բաց աստի
իր պաշտօնանկութենէն թէ՛ առաջ և թէ՛
յետոյ միաբանական Ուխտիս մէջ կը քերն ար-
ծարձել և անհամաձայնութիւնը տեւական
ընելու ջանացած է, որու ապացոյցներն են
առ հանգուցեալ Տ. Մամբէ Եպսկ. ի զրկած
կարգ մը նամակներն, որոնք այսօր մեր ձեռ-
քը կը գտնուին:

«Դառն ցաւով կը յայտարարեմ առաջի
Պատ. Ժողովոյդ, որ Տ. Գէորգ Եպսկ. իւր
ընթացքը և ուղղութիւնը տակաւին բուռն
ճիգով մը կը շարունակէ ի մեծ վնաս Ս. Ա-
թոռոյս բարոյական և նիւթական շահուց:

«Պէտք էր վերջ տալ անոր այս ընթաց-
քին: Հետեւաբար իբրև Պատրիարք Ս.
Յակոբեանց Առաք. Աթոռոյն, մեր պատրի-
արքական իշխանութեան հանգամանքով և

Միաբանական Ուխտիս կանոնադրութեան
ուժով Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեան միաբա-
նական անդամակցութենէ միանգամ ընդ
միշտ արձակել պէտք կը տեսնեմք: Տարա-
կոյս չունինք որ Պատ. Ժողովդ առ այս
պիտի տայ իւր որոշումը, վերջ դնելու հա-
մար Տ. Գէորգ Եպսկ. Երէցեանի անխղճա-
միտ գործունէութեան և ապահովելու հա-
մար որ այլեւս նմանօրինակ արարքներու մէջ
միաբան մը չը քաջալերուի գտնուիլ:

«Սէր, միաբանութիւն, ողջմտութիւն,
ուղղամտութիւն և խղճմտութիւն մաղթելով
Ձեզ ամէնուր համար

Մնամք Աղօթարար
Պատրիարք Երուսաղէմի
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
10 Ապրիլ 1907

7 Մայիս 1907
Համար 8. —

Ամենապատիւ Սրբազան Եղբայր ՚ի Քստ.
Ինչպէս մեր 2 Մայիս թուական հեռա-
գրով հաղորդած էինք, ներկայիւս հարկ կը
համարիմ կրկնել, թէ՛ ամսոյս 2ին մեր նա-
խագահութեամբ գումարուած Ս. Աթոռոյս
Միաբ. Ընդհ. Ժողովն մեր առաջարկութեան
վրայ քուէից բացարձակ առաւելութեամբ
Միաբանական անդամակցութենէ արձակեց
զՏէր Գէորգ Եպիսկ. Երէցեան՝ մեր երբեմնի
փոխանորդն ՚ի Կ. Պոլիս. Միաբ. Ընդհ. Ժո-
ղովոյ այս որոշումն հեռագրաւ հաղորդե-
ցինք նաև ՚ի Ս. Էլմիածին Մայր Աթոռոյ
Վեհապետին: Չայս ի գիտութիւն ծանուցա-
նելով Ձերդ Սրբազան Եղբայրութեան, կը
յայտնեմք թէ՛ նորին Գերապատուութիւնն
դադրած ըլլալով այլևս մեր իրաւասութեան
ենթարկուած ըլլալէ իբրև միաբան Ս. Ա-
թոռոյս, չէ կարող ընկուցութիւնը շարունակել
յԵրուսաղէմատուն, յորմէ մեկնելու համար
եթէ դժուարութիւններ յարուցանելու ըլլայ,
անշուշտ Ձերդ Բարձր Սրբազնութիւնը կը
հաճի իւր աջակցութիւնը շնորհել մեր փոխա-
նորդ Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Զիլինկիրեանի:

Ուրախութեամբ կաւետեմք նաև որ Մի-
աբ. Ժողովն իւր նոյն նիստին մէջ դարձեալ
մեր առաջարկութեան վրայ քուէից բացար-
ձակ առաւելութեամբ Ս. Աթոռոյս Լուսա-
րարապետ ընտրեց միաբանութեանս խոնկմա-
գոյն անդամներէն զՏէր Դաւիթ Վրդ. Տէր-

տէրեան, զոր մեր օրհնութեամբ հաստատելէ զկնի, հանդերձ միաբանութեամբ առաջնորդեցինք զինքը յ'Եկեղեցի, Ս. Գլխադրի վրայ օրինական ուխտը կատարելու, որմէ յետոյ անցաւ իւր նոր պաշտօնին գլուխը: Այս յարմար ընտրութիւնը առհասարակ ամէնուն ուրախութիւն պատճառեց և այսպէսով վերջ գտաւ բաւական ժամանակէ հետէ միաբանութեան անհամաձայնութեան պատճառ եղող գլխաւոր մէկ խնդիրը:

Եղբայրական սիրոյ ողջունիւ

Մնամք Աղօթակից

Պատրիարք Ս. Երուսաղէմի

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ

Ամենապատիւ

Տ. Տ. Մաղաքիա Ս. Արքեպիսկոպոս

Բարեխնամ Պատրիարք Հայոց Թուրքիոյ

'ի Կ. Պօլիս

* * *

Ե. — Երուսաղէմի ընդհ. կալուածոց բաժնին մէջ աչքի կը զարնէ սա պարագան թէ երկոտասանամեայ շրջանին մէջ Երուսաղէմայ կալուածոց և վանօրէից կարեւոր նորոգութեանց և շինութեանց մասին Տնօրէն Ժողովոյ որոշում և արտօնութիւն կը պակասէին, մինչ ծախսուած 6000է աւելի պատկառելի գումարն արդրացնող արդիւնք չ'երեւիր, տեղւոյն վրայ ասկից առաջ կատարուած քննութեամբ:

Զ. — Դամասկոսի կալուածոց տարեկան սովորական նորոգութեանց ծախսը խիստ չափազանց եղած է ենթադրեալէն, այսինքն սովորականէն 500 օսմ. ոսկի աւելի. և զարմանալի է որ մինչեւ 1903-05 տարիներու մէջ դարձեալ 167 օսմ. ոսկւոյ ծախք մ'ալ եղած է նորոգութեանց:

Է. — Բերիոյ և Կարնոյ կալուածներու գործակալք ոմանք անկանոն կերպով կառավարելով իրենց պաշտօնը, Ս. Աթոռոյ շահերը արդիւնաւոր չըլլալու վիճակի մը ենթարկուած են. Բերիոյ գործակալը վերջին տարիներս կալուածոց արդիւնքէն շատ աւելի ծախք կը ներկայացնէ շինութեանց և նորոգութեանց պատրուակին տակ. իսկ Կարնոյ գործակալը մէկ քանի տարիներէ ի վեր հաշիւ չի դրկեր, այլ տարին մի անգամ 20-30 օսմ. ոսկւոյ ջնջին գումարներ կը զրկէ Կ. Պօլսոյ փոխանորդարանին, մինչդեռ այդ եր-

կու տեղերու կալուածները տարեկան գո'նէ 200 օսմ. ոսկի կարտադրեն:

Ը. — Պարգեւներու գլխուն մէջ 12ամեայ շրջանին՝ զգալի առաւելութիւն մը կը տեսնուի, այսինքն սահմանեալ գումարէն 857 օսմ. ոսկի աւելի, և դիտելի է որ 1895-96 և 1897-1901 տարիներու մէջ է այս առաւելութիւնը, մէկ խօսքով սահմանեալ գումարին գրեթէ կրկինը վճարուեր է:

Թ. — Նոյնպէս՝ Ուխտաւորաց համար եղած ծախսը մէջ, այն ժամանակամիջոցին մէջ 1242 օսմ. ոսկիի առաւելութիւն մը կայ, որոյ մեծ մասը թարգմաններու ձեւով կատարուած ծախքերու մէջ կերեալ:

Ժ. — Դպրոցներու գլխուն մէջ նոյնպէս, 12ամեայ շրջանին մէջ սահմանեալ գումարէն 854 օսմ. ոսկիի առաւելութիւն մը:

Վերջապէս գրեթէ ամէն գլուխներուն մէջ ծախսը առաւելութիւն մէկ կողմանէ, և հասութից նուազում միւս կողմանէ, երկոտասանամեայ շրջանին վերջը Վանքը պարտական կը կացուցանեն 24,868 օսմ. ոսկւոյ հսկայ գումարին կամ միջին հաշուով տարեկան 2072 ոսկւոյ բաց մը, հետեւանք Ելմը տացոյցի և հակակշռի անգոյութեան կամ անգործադրութեան և որ աւելի պարսուելին է՝ քմածին մատակարարութեան և շռայլութեան, այսու առարկութեամբ թէ Միաբանք միմեանց վրայ փոխադարձ վստահութիւն ունին, առարկութիւն՝ զոր քանիցս ըրաւ Յանձնաժողովոյս առջև նոյն ինքն Տ. Առնդ Վրդ. Մագսուտեան, նախորդ Ելմտից Տեսուչն, երբ իրեն հարցուեցաւ թէ ինչո՞ւ համար իբր Ելմտից տեսուչ ինքը չէր ըրած վերին հսկողութիւնն որ իրեն մանաւանդ պարտադրուած էր Միաբ. կանոնագրոյն որոշ տրամադրութեանց համաձայն:

Այսօր շատ դժուար պիտի ըլլար ընդհ. մատակարարութեան մասին նիւթական պատասխանատուութիւնները ճշդել, քանի որ երկոտասանամեայ երկար շրջանի մը բոլոր տեւողութեանը միջոցին, զանազան տեսչութեանց և պաշտօնէից շատերուն մէջ կը բաժնուին այդ նիւթական պատասխանատուութիւնները: Սակայն, ընդհ. հայեցողութեամբ տարակոյս չկայ թէ յոռի մատակարարութեան գէթ բարոյապէս պատասխանատու կը մնան գլխաւորաբար ժամանակին Տնօրէն Ժողովներն և իմասնաւորի Առնդ Վրդ. Մագ-

սուտեան, որ անընդմիջաբար տարիներով վարած է թէ՛ Տնօրէն Ժողովոյ Ատենապետի և թէ՛ Ելմտից Տեսուչի կրկին պաշտօնները, համարատու և համարառու ըլլալով միանշամայն:

Իսկ այս երկոտասանամեայ մատակարարութեան միջոցին նիւթական որոշ պատասխանատուութիւն յառաջ կուգայ հետեւեալ գլխաւոր պարագաներու մէջ:

1. — 1902 Փետր. 6ին պահետի հաշւոյն 16 թիւ պարտաւորակի տարեկան 3% տոկոս 36 գաղղ. ոսկի թէ՛ պահետի և թէ՛ Մնտուկի տետրին մէջ իբր վճարեալ արձանագրուած և թէ՛ միւսնոյն թուականաւ Ս. Աթոռոյ դրամարկղին մէջ ելք նշանակուած է. և այս սխալը աննշմար անցնելով, ամսագլխուն վաւերացեալ է Մնտուկին տետրը, ինչ որ կապացուցանէ թէ Մնտուկին հաշիւը լոկ ձեւական կերպով կը բռնուէր և հնչուն դըրամը (effectif) չէր համապատասխաներ հաշուեփետրին:

Յ'ընթացս մեր քննութեան հաստատուած է արդէն զանազան պարագաներով թէ Մնտուկի հաշիւը հեռի իրական և տոմորագիտական ըլլալէ, շատ անգամ պատրաստ դրամ ցոյց կը տրուէր, մինչ իրականին մէջ գոյութիւն չունէր և փոխադարձաբար:

2. — «Նախորդ տարիներէ մոռցուած առձեռն ծախքեր» անուան ներքեւ 1904 ապրիլ 30ին ելք նշանակուած է 74 գաղղ. ոսկի, առանց ո և է մանրամասնութեան և Մնտուկի վիճակը հաւասարակշռելու համար միայն այդ գումարը ելք նշանակուած է այնու առարկութեամբ թէ այդ ծախսը մանրամասնութեանց ցուցակը կորսուած է!:

3. — 1900 Մարտ 9ին Մեծ Արտէն որմնադիր Մարգարի վաճարեալ գետնի գնէն պարտական մնացած 10 գաղղ. ոսկին բաշխուած է Ելմտից տեսուչ Առնդ Վրդ. ի ձեռամբ, առանց ո և է պաշտօնական արտօնութեան:

4. — 1889 Մարտ 10ին Երևանցի հանգուցեալ Յովհաննէս Սայատօֆ 200 մանէթ կը նուիրէ, իր յիշատակին կանթեղ մը շինուելու համար. փոխանակ այդ կանթեղը նուիրատուին կամաց համաձայն 'ի նորոյ շինելու, Եկեղեցւոյ մէջ արդէն գտնուած կանթեղներէն միոյն վրայ յիշեալ նուիրատուին անունը կը գրուի, մինչդեռ Մնտուկին մէջ ելք կը նշանակուի սոյն 200 մանէթին փոխարժէքը եղող 51. օսմ. ոսկի իբր ծախք:

5. Երկար տարիներ Ս. Աթոռոյ իմէջ բնակելով, յետոյ Պէյրութ հաստատուած պատկերահան Յովհաննէս Ճգնաւորեան Գլխաւոր 1891 Ապրիլ 1 թուակիր և 103 համար պարտաւորակաւ Ս. Աթոռոյ Մնտուկէն ունեցած 400 օսմ. ոսկւոյ 4% տոկոսաւոր պահանջը կը նուիրէ Ս. Աթոռին և ըստ այնմ պարտավորակին ետեւը կ'արձանագրուի իւր այս բաշխումը, պայմանաւ որ ի Յովպէ Աթոռապետական կալուածներէ թիւ 80/8 մթերանոցին վարձքը իրեն յատկացուի ցմահ:

Տ. Առնդ Վրդ. Մագսուտեան 1892 Մարտ 20ին Ս. Աթոռոյ դրամարկղէն կը գանձէ այդ 400 օսմ. ոսկին, ի Յովպէ թիւ 91-94 խանութներու վերաշինութեան յատկացնելու համար. այդ խանութները երկու տարի վերջ 1893-1894ին արդարեւ կը վերաշինուին, բայց ո'չ թէ Յովհաննէս Ճգնաւորեանի դրամովը, այլ Տ. Գարեգին Մ. Վարդապետի տուած 260 օսմ. ոսկւոյ և հանգուցեալ Ենի Գաբուցի Իշէրի Գաշան Յակոբ աղայի սեփական Գիթէճխանէի վաճառուէն գոյացեալ 250 ոսկիի գումարներով: Միւս կողմանէ, Յովհաննէս Ճգնաւորեան տակաւին կենդանի ըլլալով հանդերձ թիւ 80/8 մաղազան կարճանագրուի Տ. Գէորդ Եպսկ. Երեցեանի յիշատակին, որ կ'աւարկէ թէ 350 օսմ. ոսկի վճարած է առ Տ. Առնդ Վ. Մագսուտեան, որով Յովհաննէս Ճգնաւորեանի կտակած 400 օսմ. ոսկին ուէ կալուածի յատկացուած ըլլալը չը տեսնուիր և իբր այն Տ. Առնդ Վրդ. պէտք է սոյն 400 ոսկին վերադարձնէ Ս. Աթոռոյ, իւր սովորներովը միասին:

6. — Տ. Գէորդ Եպսկ. Երեցեանի տուած բացատրութեանց համեմատ իւր վճարած այն 350 լիբան մուքը նշանակուած չէ ո'չ Մնտուկին մէջ և ո'չ այլուր, հակառակ անոր որ թէ՛ վճարողը Տ. Գէորդ Սրբազան և թէ՛ ընդունողը՝ Տ. Առնդ Վրդ. կը յայտարարեն վճարուած և ստացուած ըլլալը:

7. Աղեքսանդրիոյ գետնի վաճառման հաշւոյն մէջ կ'երեւի նախորդ գործակալ Անտոն էֆ. Արթինօֆի Ս. Աթոռոյ պարտական եղած 774.03 օսմ. ոսկւոյ իրեն բաշխուելը: Այս մասին ո'չ Ս. Պատրիարք Հայրը տեղեկութիւն ունի և ո'չ ալ Տնօրէն Ժողովոյ ատենագրութեանց մէջ բաշխուելու մասին որոշում մը գոյութիւն ունի. միւս կողմանէ,

Տ. Ղևոնդ Վրդ. Կ'առարկէ թէ, այդ գումարը իր կողմէ չէ բաշխուած, այլ սոյն դեռնի վաճառման հաշւոյն վերջնապէս փակման առթիւ Արթիւնօֆի պարտքը, վանուց ապահով պահանջից կարգէն հանելով, կասկածելի պահանջից կարգը դասած է, իսկ պարտավոր հակը կը մնայ նոյն կարգի պարտավոր հակներու հետ, որպէս զի երբ ի վիճակի ըլլայ՝ իրմէ գանձուի, յաւելով միանգամայն թէ այդ պարտավոր հակը 26 Ապր. 1905ին Ս. Պատրիարք Հօր յանձնած է ուրիշ մուրհակներու հետ, և եթէ բաշխուած եղած է, այդ թուականէն յետոյ, այսինքն իր յաջորդներուն կողմէ եղած կրնայ ըլլալ: Սակայն Տ. Ղևոնդ Վրդ. այդպիսի մի կարեւոր գումար կասկածելի առնելիքներու կարգը դասելու իրաւունք չունէր և ո՛չ ալ իբր բաշխուած արձանագրելու, առանց Տնօրէն Ժողովոյ հաւանութեան և դիտութեան: Ուստի՝ նկատելով որ Արթիւնօֆի այն պարտավոր հակը մէջտեղ չկայ և Երուսաղէմի Ս. Պատրիարք Հօր չէ յանձնուած, և Տ. Ղևոնդ Վրդ. կը խոստովանի թէ պարտավոր հակը իր քովն էր մինչ 30 Ապրիլ 1905, Յանձնաժողովս պատասխանատու կը նկատէ նախորդ Ելեմից Տեսուչ Տ. Ղևոնդ Վարդապետը սոյն դրամական ապօրէն գործողութեան և իբր այն պարտի 774.03 օսմ. ոսկոյ գումարի հատուցման, ցորչափ պարտավոր հակը Ս. Պատրիարք Հօր յանձնած ըլլալը չը կարենայ հաստատել:

8. — Յուպէի շինութեանց մէջ դիտելու արժանի պարագայ մ'է որ 51 թիւ ծովեզերեայ շէնքին 'ի հիմանէ կառուցման ծախուց յատկացուած է 609 օսմ. ոսկի, և սոյն գումարը Նոր-Նախիջեանցի Տիկին Սրբուհի կոկոսանց 'ի կենդանութեան նուիրած է, իր յիշատակին արժանաբեր կալուած մը շինուելու համար:

Տ. Ղևոնդ Վրդ. ի անմիջական հօկողութեան ներքեւ կառուցեալ սոյն շէնքը և յարակից թիւ 51 մթերանոցին տարեկան վարձքը մինչդեռ միայն 39 գաղղ. ոսկի է, Տ. Ղևոնդ Վրդ. սոյն կալուածին վրայ՝ իր անձնականէն 250 օսմ. ոսկի ծախսելով յարկ մը կը բարձրանայ և իւր հաշւոյն վարձու տալով Մէսաժուրի շոգենաւային ընկերութեան Յուպէի գործակալութեան՝ տարեկան 50 գաղղ. ոսկի վարձք կը ստանայ: Ահաւասիկ նախորդ Ելեմից տեսչին Ս. Աթոռոյ

շահերը պաշտպանելու մասին ցոյց տուած գործունէութեան մի փոքր նմոյշը. ինքը որ հազարաւոր ոսկիի փոխառութիւններ կնքելու և վանքին հաշւոյն շէնքեր կառուցանելու ամէն դիւրութիւն կը հնարէր, ինչո՞ւ համար սոյն վերջին շինուած յարկն ալ Ս. Աթոռոյ հաշւոյն չէր յատկացներ որպէսզի 609 օսմ. լիբա ծախսուելով այնչափ նուազ վարձք բերող կալուածի մը գինը թեթեւնար:

9. — «Վաճառեալ Արժէթուղթ» գլխոյն մէջ՝ հետեւեալ կէտերն դիտողութեան արժանի են.

Հանգուցեալ Եսայի Պատրիարքի, Սիմէոն Եպիսկոպոսի, և այլ հանգուցեալ միաբաններու և Ս. Աթոռոյ պականեալ 2329 հատ Ռուձէլիի Երկաթուղեաց Արժէթուղթերուն վաճառումէն 9844 օսմ. ոսկի մուտք նշանակուած է Մնտուկին մէջ. նոյնպէս Սիմէոն Եպիսկոպոսի մօտ գտնուած աթոռապատկան արժէթղթոց վաճառման արժէք նշանակուած է 836 օսմ. ոսկի, առանց քանակը որոշուած, ըլլալու: Նոյնպէս դիտելի է որ՝ ո՛չ մէկ տուժար կամ յատուկ արձանագրութիւն կայ արժէթղթոց թիւերը ցոյց տուող, ի՛նչ որ ամենակարեւորն է մանաւանդ պարզեաւոր արժէթղթոց համար:

Այս առթիւ Յանձնաժողովս չը կրնար լուրթեամբ անցնիլ հետեւեալ յոյժ խորհրդաւոր թղթակցութիւնը՝ որ տեղի ունեցած է Տ. Ղևոնդ Վրդ. Մագսուտեանի և հանգուցեալ Եսայի Պատրիարքի միջեւ (որ նոյն միջոցին Պօլիս եկած էր), նաև 1889 թուականներուն, հանգուցեալ Եսայի Պատրիարքի գոյնց ցուցակագրութեան առթիւ Տնօրէն Ժողովոյ երեք նիստերուն առնագրութիւններն, Պատկառելի Ժողովոյդ թողով կարկ եղած հետեւութիւնն հանել սոյն գրութիւններէն.

(Պատճեն երկու ցամակաց)

Երուսաղէմ 26 Մարտ 1883

Ամենապատիւ և բարեխնամ Սրբազան Հայր,

Ձեր Բարձր Սրբազնութեան 10 Մարտ թուականաւ օրհնագիրն ստանալով Ձեր հրամաններուն տեղեկացայ:

700 լիբայի փոխ, գիրն Ֆրէտէրիգին յանձնեցի ի հայիւ իւր պահանջից, տակաւին 500 լիբա պարտական ենք անոր, առ այժմ 500

լիբա եւս՝ ուրիշ երկու պարտավոր հակի տէրեր կը պահանջեն, 1000 լիբայի չափ եւս՝ մինչև մայիս տոկոսներու և ապրիլի ծախքերուն պէտք պիտի ըլլայ. եթէ ուխտաւորաց եւայլն եկամուտներէն 500 լիբա ձեռք բերենք՝ 1500 լիբա կը պակսի, զոր կը յուսամ թէ այդ տեղէն կ'ստանաք ապրիլի մէջ:

Այս շարաթ Դշ. օրը հանդէսներու համար պէտք եղածներն հանուցան գանձատուէն, որոնց մասին անշուշտ կը տեղեկանաք պաշտօնական նամակէն, ինչպէս նաև Ձեր Սրբազնութեան վերջին հեռագրոյն մասին Յարութիւն Սրբազանէն, որ հարկաւ առանձին կը հաղորդէ պէտք եղածը:

Վիէննա ղրկուելիք երկու պատկերները յառաջիկայ Դշ. օր կը ղրկենք ուղղակի. Բեթղեհեմի պատկերներու մասին Միւթէսաբը՛ը կը դժկամակի շուտով պատասխանելու առարկելով թէ Յոյնք Պատրիարք չ'ունին, սպասելու է որ Պատրիարք դնեն, ահաւասիկ պարզ ապացոյց մ'ալ նորա երկշուտութեան կամ յունասիրութեան:

Սիմէոն Սրբազանին կը պատասխանեմ այսօր մուրհակի խնդրոյն համար:

Անցեալ շարաթ գրած էի թէ՛ կ'իմացնեմ հանգուցեալ Իսահակ Եպիսկ.ի գոյնց մասին: Ըստ սովորութեան՝ վախճանման Յրդ օրը սենեակը բանալով գրի առինք ի՛նչ որ սենեկին մէջ գտանք, Եկեղեցոյ վերաբերեալ մանր մուշր կարկատանի բաներ միայն կային, զոր Մնտուկի մը մէջ դնելով Եկեղեցի փոխադրեցինք: Իւր քով գտնուած հին ձեռագիրները, իւր մատանիները և այլ ունեցածները 2 սնտուկի մէջ դնելով և կնքելով Ձեր Սրբազնութեան սենեակը դրինք՝ հինգ ժամացոյցներով, հանդերձեղէններն աննշան բաներ էին, նորերը խորհրդարան կը մնան, իսկ հիները հանդերձատուն փոխադրուեցան: Իւր ունեցած գրամները և հաշիւները նայելով և պարտքերը վճարելով՝ մնաց միայն 37 լիբա օսմ.: Թղթերուն մէջ Ձեր Սրբազնութեան երկու նամակները կային, զորս արգէն կարգացած էի, Յարութիւն Սրբազանը զգուշութեամբ առնելով՝ պահեց, որոնց մէջ երկաթուղւոյ վերաբերեալ խնդիրն՝ չեմ կարծեր որ հասկցած ըլլայ, քանզի գիտէ թէ Ձեր անձնական թղթերուն կը պատկանի: Իսկ նոյն թղթերուն թիւերուն երկու ցուցակները՝ զորս վախճանելէն երկու օր առաջ հանգուցելոյն յանձնած էի, մեծ զգուշութեամբ առանձինն

կը դիտէի թղթերը ժողովին մէջ նայելու ժամանակ, բայց բան չգտայ, կ'երեւի թէ շուտով տեղը պահած էր, ուր դրած ըլլալու է նաև իմ տուած մէկ փոքր թուղթս, որուն վրայ նշանակած է ելած թիւերը իրենց թուականներովը և շահած գումարներովը:

Նախորդ շարթու խօսած էի հանգուցելոյն որ պանքայէն տեղեկութիւն պիտի առնեմ երկաթուղիներու համար, մարտ ամսոյ մէջ վճարուելիք եւյլն. մասին, և այնուհետեւ թղթերը հանելով մէջէն որոշեցինք ելած թիւերը և տոկոսին համար հարկ եղածը: Ինքը դարձեալ չէր ուղած թղթերը դուրս հանել՝ այլ միայն քուրծները հանած էր այնպիսի օր մը որ զբաղած էի, ուստի խնդրեցի որ տեղը պահէ մինչև որ որոշ տեղեկութիւն մը առնեմ, և Ձեր Սրբազնութեան գրելէ յետոյ՝ հարկ եղածն ի գործ դնենք: Լաւ եղած է որ շուտով մը իր տեղը պահեցէ: Գալով նոր լուսարարապետի ընտրութեան, յառաջիկայ Բշ. օր անշուշտ պիտի կարգացուի Ձեր Սրբազնութեան հրամանագիրը, սակայն աւելորդ չ'եմ համարիր իմացնել թէ՛ մենք ընտրութեան համար Ձեր ներկայութիւնը անհրաժեշտ համարած ենք և ըստ այնմ գործը կը կարգադրենք, հոգ չէ որ քանի մը ամիս վերջը ըլլայ, թէեւ փափաքողներ կային որ Երեմիա Եպիսկ. իւր և իւրայնոց կողմանէ ընտրելի է, ոմանք զՆերսէս ընտրելի կը ցուցնեն. մենք եւս ընտրութիւնը յետաձգելով հարկ եղած ժամանակ կը խօսինք Ներսէսի ընտրութեան անկարելի ըլլալուն և Երեմիային անյարմար ըլլալուն մասին. կուզենք գաղափարները պատրաստել Մամբրէ Վրդ.ին համար: Սակայն մեր կողմանէ ընտրելի են Մամբրէ և Սահակ Վրդ.ք: մին՝ յերկոցունց ըլլալու է, մեր խոնարհ կարծիքն է այս, իսկ Յարութիւն Սրբազան կը խորհի թէ կիրակոս Վրդ. յարմար է լուսարարապետութեան, մինչդեռ մենք կը խորհինք վերջ տալ Գանձատան անկանոն վիճակին՝ գրագէտ և հանձարեղ մէկն ընտրելով՝ և ո՛չ թէ այնպիսի մէկը՝ որ երկու տող գրելու համար ուրիշի մը պէտք կուենայ: Վերջապէս ծանր և կարեւոր խնդիր մ'է սոյն ընտրութիւնը, որուն համար Ձեր Սրբազնութեան ներկայութիւնը անհրաժեշտ կը համարինք:

Մատչելով ի համար Ս. Աջոյդ, միամ Բարձր Սրբազնութեանդ խոնարհ որդի ՂԵՒՈՆԿ ՎՐԴ. ՄԱԳՍՈՒՑԵԱՆ

Երուսաղէմ, 13 ապրիլ 1883

Ամենապատիւ և բարեխնամ
Սրբազան Հայր,

Այս շաբաթ ընդունեցի Ձեր Բարձր Սրբազնութեան մարտ 31 Օրհնագիրը, ինչպէս նաեւ անցեալ շաբաթ ընդունած էի մարտ 24 թուականաւ գիրը, և կարեւոր գրելիք մը չ'ունենալով՝ պատասխանը այս շաբթուան թողած էի:

Կիրակոսի մուրհակի հաշտոյն դրամ չ'կրցի ղրկել՝ Աստուծով ի մօտոյ կը ղրկեմ: Մարաշի Թարութիւնի պէտք եղածն խօսեցայ Ձեր Սրբազնութեան կողմէ: Գալով հանգուցեալ Իսահակ Եպիսկ. ի սենեկի բացման խընդորոյն՝ կը վատահասցնեմ Ձեր Սրբազնութիւնը որ ամենէն դիւրին և զգուշաւոր եղանակն ընտրած էինք. հարկ եղած բոլոր զգուշութիւնները ի գործ դրուած էին՝ որոյ համար կանխաւ արդէն գրած եմ, և պէտք է ըսել որ դիտմամբ ներհակեցայ Տնօրէն Ժողովէն դուրս մարդ ընդունելու հանգուցելոյն սենեակը, որպէս զի դիպուածաւ նոր չ'իթութեան մը տեղի չ'տրուի, վասն զի կը կասկածէի ցուցակը կամ չէ՞քմէ՞ք մէջ կըլլայ և կամ գրպանին մէջ, բայց գոհութիւն Աստուծոյ որ բան չ'եւաւ, որով ոչ ոք բան չ'հասկըցաւ, իսկ Ձեր նամակները՝ յոս գրած էիք որ երկաթուղեաց քրքերը հանելով ինձ որոշել տալու ելածները, Թարութիւն Սրբազանը պահեց, ամէնը 2 կամ 3 նամակ եմ, գուցէ Ձեզ ղրկած է զանոնք, եթէ չէ ղըրկած՝ դուք գիտէք:

Նա գիտէ քե՛ս անոր մէջ յիշած քրքերը Ձեր անձնական քրքերն են. գալով սարաձայնութեան զոր կը կասկածիք քե՛ս տեղի կուցնեայ՝ Ձեր Սրբազնութիւնը կրնայ վստահ ըլլալ քե՛ս իմ կողմանէ ոչ ոք կրնայ բան իմանալ, մանաւանդ քե՛ս քե՛ս պարագաներու մէջ օգնեցի Սահակ Սրբազանին որ Թարութիւն Սրբազանի ակնաբերութեանց առջեւ կը տեսնուար եւ կասկածելի դիւրի մէջ կիցնար: Հետեւաբար երկիրը տեղի չ'կայ. ուրիշ բան չ'եւաւ հանգուցելոյն սենեակէն, ինք արդէն քանիցս յայտնած էր որ սենեակը բան պահած չէ, միայն կասկածելին ցուցակն էր՝ զոր նոյնպէս գանձատուեր պահած ըլլալու է. ինձմէ՛ ելած քրքերն ուզած էր եւ ես ալ քրքի մը վրայ գրելով իրեն տուած էի՝ զոր կերելի ցուցակին հետ վարը պահած է, որովհետեւ քրքերուն մէջ չ'գտայ:

Աչքեանի կալուածոց հէօճէթները՝ հէօճէթներու դարանին մէջ պահեցինք: Արդէն յաջորդաբար տեղեկութիւն հաղորդած էի Ձեր Սրբազնութեան, այս գրածներս ալ կրկնութիւն են, բայց Ձեր հրամանը կատարելու համար գրեցի՝ ի միամտութիւն: Ձայս եւս կը յաւելում քե՛ս հանգուցեալը ժամանակի մ'ի վեր կ'զգար իր մօտաւոր մահը՝ ուսի ամէն զգուշութիւնը բրած է, այս պատճառաւ սենեակը բան չ'էր պահեր. իսկ ինձ յայցնածները այս է քե՛ս Գանձատուէն հանուած դրամով գնած են այն քրքերը եւ Արգեան կալուածները: Այսպէս Ձեր Սրբազնութեան գրութեան ամէն կէտերուն պատասխանելով կը յուսամ քե՛ս Ձեր Սրբազնութիւնը գոհ պիտի ըլլայ՝ եղած զգուշաւորութեան: Ընդ սին կարծիք կը յայցնեմ խոնարհաբար որ պատճառական գործողութեանց այն մասն որ հանգուցելոյն սենեակին ելին. կը պահանջի՝ վերջացած համարուի եւ պատճառական նամակաց նիւթ չը մատակարարէ, վասն զի տեսակ մը հակասութիւն յառաջ բերելով Փոխանորդ Սրբազանին կասկած եւ սրտեղութիւն կը պատճառէ:

Ըստ հրամանիդ՝ ընդ գրոյս կը վերադարձնեմ Ձեր Սրբազնութեան մարտ 31 նամակը ի միամտութիւն:

Յառաջիկայ Ս. Զատիկի առթիւ ի շնորհաւորութիւն կը մատչիմ ի համար Ս. Աշոյի:

Մնամ Բ. Սրբազնութեանդ Ս. Օրհնութեան կարօտ՝

Խ. Որդի
Ղ. Վ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ

1889 Յուլիս 3, Նիս Ե.

Գոյք եւ հաշի Պատրիարքարանի եւ Եսայի Պատրիարքի

Ս. Պատրիարքը յայտնելով որ՝ թէեւ տեսած է Պատրիարքարանի գոյքի ցուցակը, և անոր մէջ նշանակեալները իրեն յանձնուած են, բայց ի դրամներէն և արժեթուղթերէն, սակայն փափաքելով մանրամասն տեղեկութիւն ստանալ, հարցուց թէ՛ ինչպէս կարգադրուած էին այդ ամէնք, և թէ՛ ինչ արդիւնք ունեցած է հանգուցեալ Եսայի Պատրիարքի թղթոց քննութիւնը:

Ս. Պատրիարք Հօր հրամանաւ տեղեկութիւն տրուեցաւ թէ՛ Պատրիարքարանի գոյքի արձանագրութիւնը և ցուցակագրու-

թիւնը կարգադրուած է համաձայն տրամադրութեան Միաբ. կանոնագրի, ինչպէս նոյն տեղեկագրի մէջ նշանակուած է թէ՛ արհեստական նիւթերն ու գործիքները տպարանի և ձուլարանի մասին մէջ տեղաւորուած են, թէ՛ դրամներն Ս. Աթոռոյն Դրամարկեղ հաշտոյն անցած և հանգուցեալ Եսայի Պատրիարքին անձնական արժեթղթերն իւր անձական հաշուետեարին հետ՝ Ելեմտից Տեսչին Դրամարկեղին մէջ պահուած են, թէ՛ հանգուցելոյն թղթերը և ձեռագրերը՝ Տնօրէն Խորհրդոյ մէջ մի առ մի քննուած են ըստ որոշման Խառն Յանձնաժողովոյ և անպէտ թղթակցութիւններն ոչնչացնելով՝ կարեւորներն պահուած են խորհրդարանի թղթակցութեանց մէջ, իսկ արհեստական (կալուանիզմի, արծաթագօծի, ոսկեգօծի, լուսանկարի և յն. և յն.) և քարոզի ու հաւաքածոյ գրուածները Պատրիարքարանի հիւսիսային սենեկի մէջ տալապին մէջ զետեղուած են, իսկ հանգուցելոյն թուղթերուն մէջ գտնուած կարեւոր մի քանի հին թուղթեր, հաշուետեար մը և հաշուական մասնաւոր գործողութեանց թղթի կտորներ, ամէնը միասին ամփոփելով և տեսնելով որ արժեթղթերու հաշտոյ կը պատկանէր, կնքոյ տակ պահուեցան՝ յետոյ ի պատեհ ժամու մանրազնին քննութեան ենթարկուելու համար, որք անցեալ տարի բացուելով՝ մասնաւոր քննութեան մը յետոյ նկատելով որ նոցա կարգադրութիւնը Ս. Պատրիարքի ներկայութեան պէտք ունէր՝ վերստին պահուեցան խորհրդարանի գրամարկեղին մէջ, ուր կը մնան ցարդ: Այս տեղեկութիւններէն զինի՝ Ժողովոյս Ատենապետը նոյն թղթերը հանելով ներկայեց Ժողովիս, ուր կարեւորներն մի առ մի կարդացուելէ և խնդրոյն իսկութեան և պարագայից ցաւօք սրտի տեղեկանալէ յետոյ՝ յանձնուեցան Ղ. Անդ. Վարդապետին, որ նոյն թղթոց պարունակած հաշուին ամփոփումն պատրաստելով յաջորդ նստին Ժողովոյս ներկայացնէ:

Ատենադպիր Ատենապետ
(Գ. Վ. ԵՐԷՅԵԱՆ) (Ղ. Վ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ)

1889 Յուլիս 7, Նիս Զ.
Հաշի Եսայի Պատրիարքի
Ներկայ նստին մէջ նախ նկատողութեան առնուեցան հետեւեալ խնդիրները.

Ա. — Արժ. Ղ. Անդ. Վրդ.՝ նախորդ նստին մէջ իրեն քննութեան յանձնուած թղթոց և հաշտոյ մասին կատարած քննութեան արդիւնքը և հաշտոյն ամփոփումը (որոց մէկ մասն ենթադրական էր, վասն զի չ'ունէր կանոնաւոր հաշիւ և թուղթ) ներկայացուց, որոյ տարբերութիւնը անձանօթ և անյայտ կը մնար:

Ժողովը սոյն քննութեան արդիւնքէն և ստուգել վշտով համակեալ՝ ինքզինքը կատարեալ իրողութեան մը առջեւ տեսնելով, պատեհ ժամու թողուց մանրամասն քննութեամբ մը վերջնապէս կարգադրելու և պարագայից արձանագրելու սոյն խնդիրն, և առ այժմ իբրև նախապատրաստութիւն բաւականացաւ յանձնարարելով Գեր. Սահակ Եպիսկոպոսին, որ վերոյիշեալ անձանօթ և անյայտ տարբերութիւնը ի վեր հանելու համար մանրակրկիտ քննութիւնը կատարէ և արդիւնքը ներկայացնէ Ժողովոյս:

Ատենադպիր Ատենապետ
(Գ. Վ. ԵՐԷՅԵԱՆ) (Ղ. Վ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ)

24 Նոյեմբեր 1889, Նիս ԼԸ.
Երկաթուղւոյ արժեքուղթ

Նախորդ նստին մէջ քննութեան տեսնուած ըլլալով Ս. Աթոռոյս պատկանեալ Ռուսիայի Երկաթուղւոյ արժեթուղթերուն այն տպարակը, զոր հանգուցեալ Եսայի Պատրիարքը ի Պոլիս ուղեւորելուն առթիւ Տնօրէն Խորհրդոյ 1882 տարւոյ ԺԲ. նստին մէջ (ատենագրութիւնք՝ երես 153) հանգուցեալ Լուսարարապետ Իսահակ Եպիսկոպոսին յանձնած էր, այսօր ևս քննութիւնն եւ ցուցակաց ու արժեթղթոց բազմաթիւութիւնը շարունակուեցան եւ տեսնելով որ 2-3 արժեթղթերու տարբերութիւն մը կար, յանձնուեցաւ Գեր. Լուսարարապետին եւ Ելեմտից Տեսչին՝ վերստին բազմաթիւն մ'ընել, իսկ նոյն արժեթղթոց մասին ընելիք տնօրինութիւնն յառաջիկային թողուեցաւ:

Վասն Ատենադպիր Ատենապետ
(ԱՆԴՐԷԱՍ ՎՐԴ.) (Ղ. Վ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ)

Յ — ՆՈՐ ՇԻՆՈՒԹԻՒՆՔ

Սոյն անուան տակ ներկայացուած հաշիւները կը պատկանին 1890 թուականէն մինչև 1904 տարւոյ վերջը Երուսաղէմի եւ Յոպպէի մէջ կառուցեալ կալուածներուն շինութեանց համար՝ Տ. Ղեւոնդ Վրդ. Մագսուտեանի կողմանէ գանձուած եւ ծախսուած գումարներու, որոց ամփոփումն ըստ իւր հաշուեցոյցներուն հետեւեալն է.

Գ ա ն ձ ու մ ն ե ր

Ղրշ.	1248022	50	Միաբաններէ.
	315653	50	Նուիրատուութիւններէ.
	658546		Հողերու վաճառումէ.
	1065155		Նոր շինութեանց վարձքերէ.
	123730		Հանգուցեալ միաբանից յատկացեալ վարձքերէ.
	2172		Ս. Աթոռոյ մատակարարութեան հաշիւէն.

Ղրշ. 3413279

Վ ն ա ր ու մ ն ե ր

Ղրշ.	3428717		Նոր շինութիւնք, յաւելումներ, նորոգութիւններ.
	72258		Յաւելեալ շինուածանիւթեր.
	35952	50	Գնեալ գետնի գին.
	362519		Վճարեալ տոկոս.
	59479	50	Միաբաններու վճարած վարձարժէնն եւ զեղչ եւ նպաստ.
	10000		Մեսրոպ Վրդ. Նշանեանի վերադարձուած.

Ղրշ. 3968926

Որով Տ. Ղեւոնդ Վրդ. Մագսուտեան կը պահանջէ ըստ իւր հաշուոյն

Ղրշ. 3968926 իւր վճարումները

3413279 իւր գանձումները

Ղրշ. 555647 իւր պահանջը

Ծանօթութիւնք եւ դիտողութիւնք վերոնկարագրեալ գումարներու մասին

Ա. Գանձումներ

1. Տ. Ղեւոնդ Վրդ. իւր հաշուեցոյցներուն մէջ ցոյց կուտայ թէ ի յիշատակ իրենց անուան կառուցանելի կալուածներու՝ միաբաններէ գանձուած է 1,248,022 1/2 Ղրշ. պայմանաւ որ ցորչափ իրենք ի կեանս եւ վարձքերը իրենց վճարուին եւ յետ մահու Ս. Աթոռոյ հասոյթ նշանակուին: Որովհետեւ սոյն պայմանաւոր նուիրատուութեանց քանակի մասին ցարդ ու է կողմէ դիտողութիւն եղած չէ՝ Յանձնաժողովս կ'ընդունի սոյն գումարի ճշտութիւնը՝ բացի 10000 Ղրշ.ի գումարէն զոր Ս. Աթոռոյ համարակալ Տ. Մեսրոպ Վրդ. չ'ընդունիր ո՛չ տուած եւ ո՛չ ալ ետ առած ըլլալը, այլ կը յայտարարէ թէ

իւր խնայողութիւններէ Տ. Ղեւոնդ Վրդ.ի փոխ տուած է միմիայն 21 լիրա, զոր յետոյ տոկոսով վերստացած:

Նկատելով որ սոյն 10000 Ղրշ.ը Տ. Ղեւոնդ Վրդ. իւր հաշուեցոյցներուն մէջ միւսնոյն ատեն թէ՛ մուտք եւ թէ՛ ելք նշանակած է՝ Յանձնաժողովս առանց հետամուտ ըլլալու ստուգել այն թագուն նպատակը՝ որ այս գործողութեան մէջ կը վերագրուի իրեն, յարմար դատեց սոյն 10000 Ղրշ.ը զեղչել թէ՛ գանձումներու եւ թէ՛ վճարումներու համար գումարներէ:

2. Նուիրատուութիւն անուան տակ ցոյց տրուած 315653 1/2 Ղրշ.ի գումարը վերոյիշեալ շինութեանց առթիւ զանազան բարեսէր անձանց կողմանէ նուիրուած է: Թէ՛ սոյն գումարին եւ թէ՛ վաճառեալ կալուածներէ եւ նոր շինութեանց վարձքերէ գանձուած գու-

մարներու ճշգրտութիւնը թէ՛ յ'երուսաղէմ եւ թէ՛ աստ կազմուած հաշուեքնիչ Յանձնաժողովներու կողմանէ առանց առարկութեան ընդունուած ըլլալով՝ Յանձնաժողովս ալ նոյնութեամբ կ'ընդունի:

3. Գալով հանգուցեալ միաբաններու յատկացեալ վարձարժիւններէ գանձուած գումարներու՝ Աղգ. Կեդր. վարչութեան կողմանէ յ'երուսաղէմ պատուիրակ զրկուած Գեր. Վահրամ Եպսկ. Մանկունիի եւ Արիս էֆ. Ֆէսեհանի մասնակցութեամբ կազմուած խառն Յանձնաժողովոյ տեղւոյն վրայ կատարած քննութեանն ստուգուած է թէ վերոյիշեալ միաբաններու վախճանման թուականներէ վերջը Տ. Ղեւոնդ Վրդ. գանձած է 222,488 Ղրշ. որմէ հանելով յիշեալի նոր շինութեանց հաշուոյն վերոնշանակեալ 123,730

Ղրշ.ը կը մնայ 98,758 Ղրշ. զոր պարտի յանձնել Ս. Աթոռոյ Մատակին:

Յաւալի է դիտել տու թէ հանգուցեալ միաբանից գոյից եւ կարասեաց անկորուստ պահպանման եւ կամ նոցա վաճառմամբ գոյանալիք գումարները Ս. Աթոռոյ հասոյթ նշանակելու մասին Տնօրէն ժողովոյ կողմանէ ցոյց տրուած անտարբերութիւնը նաեւ տարիներէ ի վեր տեւած է հանգուցեալ միաբանից պատկանեալ վարձարժիւնները գանձելու խնդրոյն մէջ, այնպէս որ Տ. Ղեւոնդ Վրդ. առանց ու է մէկու մը հաշիւ տալու՝ զանոնք երկար տարիներ գանձած եւ ուզածին պէս ծախսած է:

Տ. Ղեւոնդ Վրդ. իւր տուած հաշուեցոյցներուն մէջ ցոյց կուտայ թէ հանգուցեալ միաբաններու վարձարժիւններու հաշիւէն դեռ կը պարտի.

Ղրշ.	2900	75	Բաղեչցի Պողոս պապայի	հաշուէն
	3084	50	Անդրէաս Վրդ. Միրզօեանի	»
	2592		Վանեցի պապա Մանուկի	»
	3842		Յակոբոս Վրդ. Յակոբեանի	»
	527	50	Խորէն Վրդ. Փորթուգալեանի	»
	1074		Կարնեցի Գրիգոր պապայի	»
Ղրշ.	14020.	75	Համագումար	

զոր վերագրեալ 98758 Ղրշ.էն հանելով՝ կուսնենանք 84737,25 Ղրշ.ի տարբերութիւն մը:

Սոյն տարբերութեան մասին Տ. Ղեւոնդ Վրդ.ի առարկութիւնները (տե՛ս երես 17 եւ 18 իւր 6 Մարտ 1909 թուական պատասխանագրոյն) երբեք գոհացուցիչ եւ ընդունելի չեն, հետեւեալ նկատողութիւններով.

Ա. — Կան գումարներ զորս ինք վերոյիշեալ պատասխանագրոյն մէջ կը մերժէ ընդունած ըլլալը (ինչպէս Բաղեչցի Ղարիպճան Աղա Շողիկեանի 24788 1/2 Ղրշ.ը, Ֆէսեհեցի Աւագ պապի 220 Ղրշ.ը) բայց մեծ օթէլի հաշուոյն մէջ անցուցած ըլլալով արդէն, հակասութեան մէջ կ'իյնայ:

Բ. — Շինութեան հաշուէն ու է պարտք չ'ունենալով վախճանած միաբաններէ ոմանց յատկացեալ վարձարժիւններէ իւր գանձած գումարները յետ մահու անոնց յիշատակին կալուածոց շինութեան յատկացուած ըլլալը կը յայտարարէ (ինչպէս Բաղեչցի Պողոս պապայի 13356 1/2 Ղրշ.ը, Վանեցի Մանուկ պապայի մահու ընէ վերջ անոր անուան յատկացուցած դուռ մաղաղայի 10,000 Ղրշ. փոխարժէքը ելլն. ելլն.) բայց ակնարկած շի-

նութիւնները կամ գոյութիւն չունին՝ ինչպէս վերոյիշեալ դուռ մաղաղան եւ կամ եթէ ունին՝ անոնց մասին ցարդ ու էիցէ հաշիւներկայացուցած չ'ըլլալով անձանօթ կը մընան, ինչպէս եւ վերոյիշեալ սոյն կալուածները՝ զորս կը յայտարարէ շինած ըլլալ Պողոս պապայի եւ Մարաչցի Յարութիւն Բէշիշեանի հաշիւներուն:

Ուստի սոյն նկատողութեամբ վերոնշանակեալ 84737 Ղրշ.ի տարբերութիւնը եւս պէտք է փնտռել Տ. Ղեւոնդ Վարդապետէ:

4. Մատակարարութեան հաշիւէն նոր շինութեանց հաշուոյն անցած 2172 Ղրշ.ը Յանձնաժողովս ընդունելի դատած է, նըկատելով որ գումարը ինքնին աննշան է եւ նոր շինութեանց մեծ մասին վարձքերն արդէն Ս. Աթոռոյ կը պատկանին:

Բ. Վճարումներ

1. Նոր շինութեանց եւ անոնց վրայ կատարուած յաւելումներու եւ նորոգութիւններու համար իւր հաշուեցոյցներուն մէջ Տ. Ղեւոնդ Վրդ.ի ծախք նշանակած 3,428

717 զր. ին 3,202,969 զր. Ը յ'երուսաղէմ և 225,748 զր. Ը ի Յոպպէ կատարած շինութեանց յատուկ է :

Սոյն շինութիւնը յ'երուսաղէմ տեղի ունեցած գայթակղութեանց և գտաութեանց պատճառներէն ամենամեծը ըլլալուն կ'արժէ որ անոնց մասին Պատկառելի Ժողովոյդ քիչ մը ընդարձակ տեղեկութիւն տրուի :

Յ'երուսաղէմ նոր շինուած կալուածները որ կը բաղկանան 2 մեծ օթէլէ և անոնց տակը գտնուած 73 մաղաղա և խանութներէ, 7 մեծ եւ փոքր տուններէ, մէկ աղօրիքէ եւ ութ մաղաղաներէ՝ կառուցուած են պարիսպէն դուրս Յոպպէի ճամբուն վրայ գտնուած այն ընդարձակ գետնին վրայ, որ Մեծ Այգի կը կոչուի և որուն սեփականութեան իրաւունքը նախապէս դատի առարկայ եղած էր՝ ընդ մէջ Ս. Աթոռոյ եւ կարկուռի :

Այս կալուածներէն թիւ 86 Մեծ Օթէլին եւ անոր տակը գտնուած 37 Մաղաղաներուն համար Ղեւոնդ Վրդ. շինութեան զուտ ծախք ցոյց կուտայ 1,620,000 զր. և նորոգութեանց եւ յաւելմանց համար 53,293 զր. և թիւ 87 ա փոքր օթէլին եւ անոր տակը գտնուած 36 Մաղաղայ եւ խանութներու համար շինութեան զուտ ծախք 1,020,000 զր. և նորոգութեանց եւ յաւելմանց համար 28,113 զր. իսկ մնացեալ տուններուն եւ աղօրիքի եւ այլ շինութեանց համար 481,263 զր. :

Հակառակ Միաբ. Ժողովոյ կանոնագրին 31 Յօդուածի՝ որ կը տրամադրէ՝ թէ ամէն տեսակ շինութիւնը կատարուին՝ Տնօրէն Ժողովոյ որոշումը կայանալէ վերջ, վերոյիշեալ շինութիւններէն թիւ 8 Մեծ օթէլը ի բաց առնելով, միւսները կառուցուած են առանց ո եւ է պաշտօնական որոշումի, թէպէտեւ շինութիւնը տարիներու տեւողութեամբ ընդհանուր միաբանութեան ալքի առաջ և անոնց գիտութեամբ տեղի ունեցած ըլլալուն՝ չէ կարելի այս մասին ամբողջ պատասխանատուութիւնը ծանրացնել միմիայն Ելեւմտից տեսուչ Տ. Ղեւոնդ Վրդ. ի վրայ : Բայց օրինազանցութիւնը միայն ասոր մէջ չի կայանար. Տ. Ղեւոնդ Վրդ. յիշեալ շինութեանց յատկացեալ գումարները, որուն մէկ մասը եթէ միաբաններու անձնական դրամներն են՝ բայց մեծագոյն մասը կը բաղկանայ նուիրատուութիւններէ, վաճառեալ գետնի արժէքէ եւ Ս. Աթոռոյ եւ հանգուցեալ միաբա-

նից վարձարժիններէ, տարիներով գործածած է (1890էն մինչեւ 1905) առանց անոնց մանրամասն հաշիւը ներկայացնելու Տնօրէն Ժողովին եւ բաւականացած է միմիայն 1895 Փետր. 20 թուականին ներկայացնելով թիւ 86 Մեծ օթէլին և Յոպպէի մէջ կառուցած 4 մաղաղաներուն հաշուց մէկ ամփոփոյքը և յայտարարած է թէ տակաւին շինուելիք պահանքներ, կարգադրուելիք հաշիւներ եւ ուրիշ տեղեր գործածուած շինութեան ներքին զանուելուն պատճառաւ՝ անոնց հաշիւը որոշելէ՝ ճշդելէ եւ կարգադրելէ վերջն է որ պիտի ներկայացնէ յիշեալ 86 թիւ Մեծ օթէլին վերջնական հաշիւը. հաշիւ մը զոր ց'արդ չէ ներկայացուցած եւ որ կերեւայ թէ ներկայացնելիք ալ չունի, քանի որ Յանձնաժողովոյ տուած 6 Մարտ 1909 պատասխանագրոյ մէջ (երես 23) կը յայտարարէ թէ՝ սոյն հաշուց մանրամասնութիւնները պարունակող տոմարները քննուած եւ ընդունուած ըլլալով վանական վարչութեանէն եւ նախկին վարչական հաշուեքննիչ Յանձնաժողովին ալ ներկայացուցած՝ այլ եւս անոնց պէտք չունենալուն քովը չէ պահած որ կարենայ ներկայացնել :

Արդ՝ նկատելով որ Տ. Ղեւոնդ Վրդ. յիշեալ շինութիւններու ծախուց մանրամասնութիւնները պարունակող տոմարները չը ներկայացնեն եւ ի ձեռքին չունի արդարացուցիչ թուղթեր :

Նկատելով որ յիշեալ շինութեանց իւրաքանչիւրին ծախուց մասնակի համագումարները մեծ մասամբ կը բաղկանան կրոր գումարներէ՝ (Մեծ օթէլ 1,620,000 զր. փոքր օթէլ 1,020,000 զր.) ինչ որ լաւ գաղափար մը կազմելու չի ծառայեր ճշտութեան եւ իրականութեան աստիճանի մասին :

Նկատելով որ թիւ 86 Մեծ օթէլի շինութեան ծախքերը որ 1890 թուականէն մինչեւ 1895 տեւած եւ ըստ Ղեւոնդ Վրդ. ի հաշուոյն՝ վճարեալ տոկոսներով հանդերձ 1,851,728 զր. ի յանգած են, չէ կարելի Տնօրէն Ժողովոյ մի քանի ժամ տեւած մէկ նստին մէջ քննել, և թէ Տնօրէն Ժողովոյ վերոյիշեալ 20 Փետր. 1895 թուականի ստիտի ատենագրութեանց մէջ այն հաշիւը քննուած եւ վաւերացուած ըլլալու մասին ո եւ է բացայայտութիւն չ'կայ, ինչպէս նաեւ չը կայ ի Յոպպէ կառուցեալ 4 մաղաղաներու հաշուց համար նոյն թուականաւ կայացած ուրիշ ատենագրութեան մը մէջ :

Նկատելով որ Տնօրէն Ժողովոյ ատենագրութեանց մէջ՝ բացի վերոյիշեալ կալուածներու շինութեանց հաշիւներու մասին եղած կցկուտ տեղեկութեանց, միւս բոլոր շինութիւններու հաշուց մասին ո եւ է տեղեկութիւն չէ գտնուած՝ Տ. Ղեւոնդ Վրդ. ի ներկայացուցած ծախուց գումարները կ'ընդունի ենթադրական՝ որով եւս անվաւեր :

Բայց որովհետեւ առ ի չգոյէ վաւերական տոմարաց եւ արդարացուցիչ թղթոց, ծախուց ընդունելի քանակը ճշդելու համար նախկին Ազգ. Վարչութեան որոշմամբ պէտք տեսնուած է՝ տեղւոյն վրայ ճարտարապետական քննութիւն կատարել, ուստի յանձնաժողովս ալ շինութեան ծախուց քանակի մասին իր հիմ կ'ընդունի ճարտարապետական գնահատումը :

Շինութեանց համագումար ծախքերէն՝ որ ինչպէս վերը ցոյց տրուած է՝ կը յանգին 3,428,717 զր. ի՝ 3,119,996 1/2 զր. ի շինութիւնը ճարտարապետական գնահատութեան ենթարկելով՝ 674,572 Քր. արժեցուցած են. բայց նկատելով որ ճարտարապետը աննախատեսելի եւ զանազան ծախուց փոխարէն միմիայն Մեծ օթէլի գնահատական արժէքը եղող 366,396 Քր. ի վրայ 5% հաշուով 18319 Քր. աւելցուցած, բայց միւս շինութեանց համար սոյն 5% ի յաւելումը չէ ըրած եւ նկատելով որ ամէն շինութեանց մէջ անխուսափելի եղող սոյն տեսակ ծախուց եւ փոփոխութեանց համար անհրաժեշտաբար հարկերն հինգ եւ աւելի ծախք մը պեղի կունենայ, ուստի Յանձնաժողովս արդարութեան պարտք համարեց մնացեալ 308,176 Քր. ին վրայ 5% համեմատութեամբ 15,409 Քր. 60 սանդղիմ յաւելում մը ընել, որով ճարտարապետական գնահատմանց համագումարը կ'ըլլայ 708.300 Քր. 60 սանդղիմ գոր (4.40) զր. ի հաշուով ոսկի զր. ի վերածելով կ'ունենանք 3,116,522 1/2 զր. ի, սոյն գումարը բաղադատելով Տ. Ղեւոնդ Վրդ. ի ցոյց տուած 3,119,996 1/2 զր. ի վերագրեալ գումարին հետ՝ կունենանք միմիայն 3474 զր. ի տարբերութիւն մը, որ բաղադատմամբ վերոյիշանակեալ գումարներու մեծութեան, նշանակութեանէ զուրկ ըլլալուն՝ Յանձնաժողովս նոյնութեամբ ընդունելի դատեց Տ. Ղեւոնդ Վրդ. ի շինութեանց եւ փոփոխութեանց եւ յաւելմանց համար ծախք նշանակուած վերագրեալ 3,119,996 1/2 զր. ի գումարը :

2. — Նոր շինութեանց հաշուոյն մէջ Տ. Ղեւոնդ Վրդ. 35,952 1/2 զր. ի ծախք մը ցոյց կուտայ իբր գնեալ գետնի գին : Գիտնալով որ յիշեալ շինութիւնը՝ ամբողջովին Ս. Աթոռոյ սեփականութիւնը եղող հողերուն վրայ շինուած են՝ Յանձնաժողովս այս մասին քննութիւն կատարելով ստուգեց թէ յիշեալ 35,952 1/2 զր. ի նոր շինութեանց հաշուոյն հետ ո եւ է առնչութիւն չունի, այլ Տ. Ղեւոնդ Վրդ. Մեծ արտէն 914 կանգուն տեղ վաճառելով եւ անոր փոխարժէքը եղող 34,145 1/2 զր. ի առանց Ս. Աթոռոյ Սնտուկին մուտք նշանակելու կատարելապէս միեւնոյն գնով յանուն հանգուցեալ Եսայի Պատրիարքի հաշուոյն իբր գնուած ցոյց կուտայ Լիթթի մօտ այգիի մը բաժինները, որով սոյն գումարը Սնտուկին Ելից կողմն ալ չ'երեւիր : Ուստի եթէ ընդունելի ալ ըլլայ թէ սոյն երկու հողերու արժէքները մէկըմէկ կը փոխարինեն՝ անլուծելի կը մնայ վերոնշանակեալ 35,192 1/2 զր. ի գումարին նոր շինութեանց հաշուոյն ծախք նշանակելը, եւ հաշուակալութեան ամէն նրբութեանց հակառակ՝ զոր այս մասին ցոյց կուտայ Տ. Ղեւոնդ Վ., սոյն գումարը անոր բացարձակ պարտքը ըլլալէ չի դադրիր՝ որով զայն ալ պէտք է անցընել յիշեալին պարտուց կողմը :

Այս առթիւ Յանձնաժողովս դիտել կուտայ թէ Մեծ Արտէն սոյն 914 կանգուն գետնի վաճառումը, եւ Լիթթի մօտ ի յիշատակ հանգուցեալ Եսայի Պատրիարքի ծախու առնուած հողերու գնումը եթէ Տնօրէն Ժողովոյ գիտութեամբ եւ հաւանութեամբ ալ եղած ըլլան, ի նկատի առնելով երկու գումարներուն միջեւ իրենց ամենափոքր կոտորակներու մէջ համանման ըլլալը, կատարուած գործողութիւնը վերին աստիճան կասկածելի կը գտնէ :

3. — Նոր շինութեանց հաշուոյն ծախուց կողմը յաւելեալ շինութեան ներքին իբր փոխարժէք 72,258 զր. ի գումար մը ցոյց տրուած է :

Նկատելով որ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. չը կըրնար ճշդել թէ ո՞ր տեսակ շինութեան ներքին է ո՞րչափ աւելցած է :

Նկատելով որ՝ Մեծ Օթէլին շինութեան ներքին արժէքը մէկ հաշուեցոյցի մը մէջ 45,000, ուրիշի մը մէջ 40,000 ցոյց տուած է :

Սոյն փոխարժէքը ենթադրական կը գըտնէ եւ ցորչափ Տ. Ղեւոնդ Վրդ. չը կարե-

նայ ճշգրտել անոնց քանակը և որակը, իւրաքանչիւրը իւր գնման արժէքով յիշեալ 72 558 Ղրշ.ը կը զեղչէ իւր ծախուց գումարէն:

4. — Տ. Ղեւոնդ Վրդ. 362,519 Ղրշ. ելք նշանակած է իբր վճարեալ տոկոս նոր շինութեանց հաշուոյն կատարած փոխառութեանց:

Նկատելով որ՝ Ս. Աթոռոյ անուան եղած ամէն փոխառութիւն Տնօրէն Ժողովոյ որոշմամբ կատարել հարկ է, ըստ տրամադրութեան Կանոնագրի:

Նկատելով որ՝ յիշեալ Ժողովոյ ատենագրութեանց մէջ նոր շինութեանց համար եղած փոխառութեանց մասին ուէ որոշում մը չէ արձանագրուած:

Նկատելով որ՝ յիշեալը չի ճշգրտել թէ սոյն շինութեանց հաշուոյն ո՞ր թուականին որմէ՞ քանի՞ Ղրշ. փոխ առած է եւ իբր Մայր գումար եւ տոկոս ո՞ր թուականին, որո՞ւ որչափ դրամ վճարած է:

Նկատելով որ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. սոյնգումանակ գումարները ո՛չ թէ Ս. Աթոռոյ՝ այլ իր իսկ անուան փոխ առած ըլլալը կը յայտարարէ:

Նկատելով որ՝ նոր շինութեանց հաշուոյն նուիրատուութիւններէ, գետնի վաճառումէ,

Ղրշ.	3,418,279	Համագումար հասութից ըստ Տ. Ղեւոնդ Վրդ.ի, ուրիկէ զեղչելով
	10,000	Տ. Մեսրոպ Վրդ.ի անուամբ անցուցածը, կը մնայ
Ղրշ.	3,408,279	որոյ վրայ աւելցնելով
	98,758	հանգուցեալ միաբաններու վարձարածիներէ պակաս մուտք նշանակուածը
Ղրշ.	3,502,037	համագումար՝ Տ. Ղեւոնդ Վրդ.ի գանձումներու:

Ծախուց կողմը

Ղրշ.	3,968,926	Համագումար ծախուց՝ ըստ Ղեւոնդ Վրդ.ի, ուրիկէ զեղչելով
	10,000	Տ. Մեսրոպ Վրդ.ի անուան ելք նշանակածը
Ղրշ.	3,958,926	որմէ զեղչելով նաեւ
	35,952	50 գնեալ գետնի գին
	72,258	յաւելեալ շինուածանիւթեր
Ղրշ.	470,729	50 362,519 վճարեալ տոկոս

Ղրշ. 3,488,196 50 կը մնայ իւր ծախուց զուտ գումարը զոր հանելով իւր գանձումներուն վերոնշանակեալ գուտ գումարէն՝

Ղրշ. 3,502,037 իւր գանձումները

Ղրշ. 3,488,196 50 իւր ծախքերը և վճարումները

Ղրշ. 13,840 50 կը մնայ՝ զոր պէտք է անցընել Տ. Ղեւոնդ Վրդ.ի պարտուց կողմը:

Ղրշ. 947,944 Ասոր վրայ աւելցնելով պահեստի Մատուկի հաշուէն առած գումարը՝ Տ. Ղեւոնդ Վրդ.ի նոր շինութեանց հաշուէն համագումար

Ղրշ. 961,784 50 պարտքը կ'ըլլայ:

վարձքերու գանձումներէ եւ միաբաններու վճարած դրամներէ զատ ամէն ատեն իր տրամադրութեան տակ ունէր իբր Ելմտից տեսուչ Ս. Աթոռոյ Մատուկին պատրաստ դրամը որ ամսավերջերու հաշուոց նայելով 500է մինչեւ 1500—2000 ոսկուոյ կը յանգէին:

Նկատելով որ՝ Ս. Աթոռոյ Մատուկին մէջ շատ անգամ մատակարարութեան ծախքերու բաւելու չափ դրամ գտնուած ատեն իսկ Տ. Ղեւոնդ Վրդ. չէ դադարած յանուն վանքին տոկոսաւոր փոխառութիւններ կնքելով իւր տրամադրութեան տակ գտնուած դրամի քանակը շատցնելէ:

Յանձնաժողովս կ'եզրակացնէ թէ Տ. Ղեւոնդ Վրդ. յիշեալ շինութեանց համար ամէն ատեն իր տրամադրութեան տակ գըտնուած դրամները գործածելով՝ երբեք տոկոսաւոր փոխառութիւն չէ կնքած սոյն հաշուոյն եւ որով իւր իբր վճարած ցոյց տուած 362,519 Ղրշ.ի տոկոսն ալ ընդունելի չը համարէր:

Ամփոփելով վերոյիշեալ հասութից եւ ծախուց վերաբերեալ յաւելումներն ու զեղչերը, կուեննանք հասութից կողմը:

Ղրշ.	3,418,279	Համագումար հասութից ըստ Տ. Ղեւոնդ Վրդ.ի, ուրիկէ զեղչելով
	10,000	Տ. Մեսրոպ Վրդ.ի անուամբ անցուցածը, կը մնայ
Ղրշ.	3,408,279	որոյ վրայ աւելցնելով
	98,758	հանգուցեալ միաբաններու վարձարածիներէ պակաս մուտք նշանակուածը
Ղրշ.	3,502,037	համագումար՝ Տ. Ղեւոնդ Վրդ.ի գանձումներու:

Ծախուց կողմը

Ղրշ.	3,968,926	Համագումար ծախուց՝ ըստ Ղեւոնդ Վրդ.ի, ուրիկէ զեղչելով
	10,000	Տ. Մեսրոպ Վրդ.ի անուան ելք նշանակածը
Ղրշ.	3,958,926	որմէ զեղչելով նաեւ
	35,952	50 գնեալ գետնի գին
	72,258	յաւելեալ շինուածանիւթեր
Ղրշ.	470,729	50 362,519 վճարեալ տոկոս

Ղրշ. 3,488,196 50 կը մնայ իւր ծախուց զուտ գումարը զոր հանելով իւր գանձումներուն վերոնշանակեալ գուտ գումարէն՝

Ղրշ. 3,502,037 իւր գանձումները

Ղրշ. 3,488,196 50 իւր ծախքերը և վճարումները

Ղրշ. 13,840 50 կը մնայ՝ զոր պէտք է անցընել Տ. Ղեւոնդ Վրդ.ի պարտուց կողմը:

Ղրշ. 947,944 Ասոր վրայ աւելցնելով պահեստի Մատուկի հաշուէն առած գումարը՝ Տ. Ղեւոնդ Վրդ.ի նոր շինութեանց հաշուէն համագումար

Ղրշ. 961,784 50 պարտքը կ'ըլլայ:

4. — ԳՆԵԱԼ ԵՒ ՎԱՃԱՌԵԱԼ ԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Յանձնաժողովոյս քննութեան ենթարկուած հաշուական խնդրոց կարեւոր մէկ մասը կը կազմեն (1893—1905) ժամանակամիջոցի մէջ վաճառեալ և գնեալ կալուածներուն խնդիրը:

Ա. — Վաճառեալ կալուածք.

Վերոնշանակեալ ժամանակամիջոցի մէջ Երուսաղէմի և Եգիպտոսի կալուածներէն ծախուածներուն համագումար արժէքը կը հասնի 36,782 Օսմ. ոսկուոյ, որոյ մանրամասնութիւնն է.

Աղեքսանդրիոյ գետին	28124
յ'Երուսաղէմ մեծ արտէն վաճառեալ գետիններ	6180
Ճառների քովի արտէն	132
յ'Երուսաղէմ Աթանասի գետին	308
» Գարնայի »	370
Երիզովի Այն-հաճլա արտը	492
Ի Գահիրէ 22 կտոր աւերակ շէնքեր	1022
Յուպէի խրամէն վաճառեալ քարեր	154
	<hr/>
	36782

Առոնցմէ զատ առաջինը և կարեւորագոյնը եղող Աղեքսանդրիոյ գետինը 41,131 կանգուն տարածութեամբ, 1900 թուականին ծախուած է Անգլ. ընկերութեան մը: Վաճառումը սկզբամբ որոշուած է Տնօրէն Ժողովոյ 3 մայիս 1899ի նիստին մէջ և տրուած բացատրութեանց նայելով զանազաններու հետ սակարկութենէ վերջ, 1900 փետրվարին ծախուած է վերոյիշեալ ընկերութեան:

Նկատելով որ՝ որոշումի և առուծախի գործողութեանց թուականներու մէջ ինը ամսուան ժամանակամիջոց մը անցած է շատերու կողմանէ խնդրանք մատուցուած ըլլալով՝ կարելի էր աճուրդի և հրատարակութեան ամէն պայմանները կատարել՝ բայց չէ կատարուած:

Նկատելով որ՝ այս տեսակ կարեւորագոյն խնդրոյ մը համար՝ փոխանակ դիմելու տեղւոյն ազգայնոց խորհրդին և անոնցմէ յանձնաժողով մը կազմելու, գործին ամբողջ անօրինութիւնը յանձնուած է միմիայն տեղւոյն Տեսուչ հանգուցեալ Վահրամ Վրդ. Ազարեանի, եւ այսպէսով շատ արդարացի դիտողութեանց եւ քննադատութեանց տեղի տրուելէն զատ, Ս. Աթոռոյ շահերուն մեծապէս վնասած ըլլալու հաւանականութիւն ալ կայ:

Յանձնաժողովս տեղի ունեցած զանցառութիւնը դատապարտելի կը գտնէ՝ եւ իւր Սրբազան Նախագահովը մէկտեղ՝ Տնօրէն

Ժողովոյ ամբողջ անդամները բարոյապէս պատասխանատու:

1895էն մինչ 1904 զանազան թուականներու Մեծ Արտէն մաս առ մաս 14220 կանգուն գետին վաճառելով՝ գանձուած է 6180 օսմ. ոսկի:

Յ'Երուսաղէմ կազմեալ Յանձնաժողովոյ կողմանէ եկած 17 դեկտ. 1907 թուական տեղեկագրին մէջ զխտել կը տրուի թէ, երբ մի կողմանէ վանական վարչութիւնը Վանքին նիւթական անձկութիւնը առարկելով յիշեալ շրջանի մէջ Մեծ Արտէն կարեւոր վաճառումներ ըրած է, նոյն շրջանի մէջ զանազան տեղեր մեծ մասամբ անկարեւոր գետիններ գնելու համար 2584 օսմ. ոսկի վրձարած է, ի բաց առեալ այն 4702 օսմ. ոսկիի գնումները՝ զորս Տէր Ղեւոնդ Վրդ. կը յայտարարէ կատարած ըլլալ ի հաշիւ Ս. Աթոռոյ:

Յանձնաժողովս ընդունելով սոյն զիտողութեան շատ իրաւացի ըլլալը, տեղի ունեցած գործառնութեանց և յոռի մատակարարութեան համար՝ Տնօրէն Ժողովը բարոյապէս պատասխանատու կը նկատէ, մանաւանդ երբ ի նկատի առնուի թէ այս հողերու վաճառման եւ գնման գործողութիւնք կատարուած են՝ առանց Մատուկին մէջ արձանագրուած ըլլալու մուտք եւ ելք, ինչ որ հաշուակալութեան մեծ զեղծում մ'է:

Ի ճառներ՝ Յունաց վանքին ծախուած

928 մէթր գետնի վաճառուը յ'երուսաղէմ կազմեալ հաշուեցնիչ Յանձնաժողովը օրինաւոր չի գտներ (տեսնել 17 դեկտ. 1907 իւր տեղեկագիրը), առարկելով թէ Տնօրէն ժողովոյ 1900 նոյ. 15ի տեղի ունեցած նիստին մէջ խօսքը միայն անցած է վաճառման, բայց վերջնական որոշում չէ տրուած, թէպէտեւ Տ. Ղեւոնդ Վրդ. իւր պատասխանագրոյն մէջ սոյն արտի վաճառուը՝ Տնօրէն ժողովոյ 23 օգոստ. 1901ի նստին մէջ վերջնականապէս որոշուած ըլլալը կը յայտարարէ. բայց նկատելով որ՝ յիշեալ ժողովոյ ատենագրութիւնը 1900 նոյ. 6էն սկսեալ ըստ օրինի Դիւանի կողմէ ստորագրուած չեն, այս տեսակ որոշում մը անընդունելի է:

Երիքովի Այն-Հաճիւ անուանեալ արտին վաճառուը՝ յիշեալ Յանձնաժողովոյ կողմէն է թէ՛ պարբերի եւ թէ՛ Ս. Երուսաղիմայ շահուց տէսակէտով յոյժ միասակար դատուած է (տեսնել 17 դեկտ. 1907 տեղեկագիրը): Ապօրինի դատուած է:

Նկատելով որ՝ վաճառման որոշումը Տընօրէն ժողովոյ ատենագրութեանց տոմարին մէջ 1896 փետր. 19ի նիստին մէջ կայացած ցոյց տրուած, բայց արձանագրութիւնը նոյն տարւոյ Մարտ 11ի նստին ատենագրութիւնէն վերջը իբր շարունակութիւն նախորդ նիստի յիտոյ կատարուած: Վնասակար դատուած է:

Նկատելով որ՝ սոյն գետինը պատմական մեծ կարեւորութիւն ունի եւ հակառակ մի քանի հազար ոսկոյ արժէք ունենալուն՝ ծախուած է 492 օսմ. ոսկիի, առանց ի հաշիւ առնելու թէ տարի մը առաջ նոյն գետնի ջուրի ճամբայներու շինութեանց համար՝ 202 օսմ. ոսկիի ծախք մը տեղի ունեցած է, որով գետնի գուտ փոխարժէքը կ'ըլլայ 290 օսմ. ոսկի:

Նկատելով որ՝ սոյն գետնի սեփականութեան մասին յարուցուած խնդիրը՝ վաճառուէն բաւական ժամանակ առաջ Երուսաղէմի կառավարական վարչական ժողովոյ կողմանէ քննուելով կարգադրուած էր ինը պատ Վանքի (տես Եղիշէ Վրդ. Չիլինկիրեանի 20 ապրիլ 1907 թուական նամակը):

Նկատելով որ՝ սոյն գետինը հակառակ իւր պատմական կարեւորութեան եւ իրական արժէքին՝ շատ ոչինչ գնով մը ծախուած է:

Նկատելով որ այս մասին Տնօրէն ժողովոյ ատենագրութեանց մէջ կատարուած ար-

ձանագրութիւնը կասկածելի հանգամանք մը կը ներկայացնէ:

Յանձնաժողովօ սոյն գետնի սեփականութիւնը դատի ենթակայ եղած ըլլալու մասին Տ. Ղեւոնդ Վրդ. ի մէջ բերած առարկութիւնները անընդունելի դատելով, կատարուած վաճառուը ապօրինի եւ Ս. Աթոռոյ շահուց միասակար կը նկատէ:

* * *

Բ. — Գնեալ կալուածներ

Յանձնաժողովոյս քննութեան ենթարկուած հաշուեցոյցերու եւ տեղեկագրերու մէջ սոյն անուան տակ ցոյց տրուած են.

Ա. — Այն կալուածները որոնց փոխարժէքը արդէն Ելք նշանակուած է Ս. Աթոռոյ հաշուեցոյցներուն մէջ.

Բ. — Այն կալուածները որոց գնման մասին ուէ որոշում և արձանագրութիւն չկայ, բայց Տ. Ղեւոնդ Վրդ. յետ դադարելոյ Ելեւոսից պաշտօնէ՝ Պոլիս եկած միջոցին յայտարարած է թէ գնմանը գնած է ի հաշիւ Ս. Աթոռոյ:

1. — Ասոնց առաջին մասը որոց համագումար արժէքը կը հասնի 2584 օսմ. ոսկիի գնուած է 1893—1902 տարիներու տեւողութեան միջոցին:

Նկատելով թէ՛ վերոյիշեալ ժամանակամիջոցին մէջ Ս. Աթոռոյ հաշուեցոյցերը ամէն տարի կարեւոր բացով մը գոցուած են եւ տոկոսաւոր պարտքը շարունակ աւելցած.

Նկատելով թէ՛ ծախու առնուած գետինները մեծաւ մասամբ բաժիններէ կը բաղկանան եւ կան անոնց մէջ անանկ կալուածներ՝ որոնք ապագային մաշիւլ նկատուելու վտանգին ենթակայ են, և բացի Եկեղեցական նկատումներով ծախու առնուած մի քանի կտորներէ, որոնցմէ ու է հասոյթ չը սպասուիր, միւսները ամէնքն ալ այսօր գրեթէ ու է վարձք չեն բերեր (տես 17 դեկտ. 1907 թուական տեղեկագիրը):

Նկատելով որ՝ սոյն գետնիներու կալուածագրերը, բաց ի միոյն՝ որ յանուն Տ. Վահրամ Վրդ. ի ելած է, միւսներն ամէնքն ալ Տ. Ղեւոնդ Վրդ. ի անուան առնուած, բայց ներքին կանոնագրի տրամադրութեան համաձայն ցարդ Ս. Աթոռոյ անուան վազըֆ եղած չեն:

Յանձնաժողովս սոյն գնումները անխորհուրդ և Ս. Երուսաղիմայ շահերուն անը-

պատ կը գտնէ, եւ հանդերձ իւր Սրբազան Նախագահով՝ Տնօրէն ժողովոյ անդամները ամենքն ալ բարոյապէս պատասխանատու:

2. — Վերոնշանակեալ գնումներու երկրորդ մասը, (տեսնել մանրամասնութիւնները 17 դեկտ. 1907 տեղեկագիրը) գնումներ՝ զորս Տ. Ղեւոնդ Վրդ. կը յայտարարէ կատարած ըլլալ տարբեր ժամանակներու մէջ ի հաշիւ Ս. Աթոռոյ, կը յանգին 4702 օսմ. ոսկիի գումարի մը, եւ տեղի ունեցած են առանց Տնօրէն ժողովոյ որոշման, եւ յանգէտս ամենայն միաբանութեան՝ ընդ որս է նաեւ անոր Սրբազան Նախագահը, այս մասին իւր տուած բացատրական գրերուն մէջ կը յայտարարէ թէ՛ այս գնումները կատարած է ի նկատ առնելով Ս. Աթոռոյ այն շահերը, որոց հողածութիւնը իրեն յանձնուած էր, եւ մէկ մասը գնած է՝ ո՛չ թէ դիւմամբ կամ յօժարութեամբ՝ այլ հարկեցուցիչ պարագաներէ ստիպեալ. և եթէ ասոնց ամէնուն կալուածագրերը իր անուան առած է՝ այս ուրիշ պատճառաւ չէ՛ բայց եթէ Ս. Աթոռոյ անուան կալուածագիր հանելն ըստ օրինի անկարելի ըլլալուն, ապա թէ ոչ երբեք չէ եղած որ իր հաշուոյն գնած մէկ կալուածը յետ ժամանակաց վանքին հաշուոյն անցուցած ըլլայ:

Միաբանական Ընդհ. ժողովը՝ որոյ հաւանութեան ենթարկուած էր Տ. Ղեւոնդ Վ. ի սոյն գնումներն ընդունել կամ մերժել, դիտել կուտայ որ սոյն գնումներն առանց Տնօրէն ժողովոյ զիտակցութեան և արտօնութեան կատարուած են, և կը յաւելու թէ կարելի է ընդունել միայն այն կալուածները՝ որոնք աթոռապատկան կալուածոց յարակից կը գտնուին, ցոյց տրուած արժէքներն ստուգելու պայմանաւ: Իսկ մերժած է կարգ մը անպէտ և մեծ մասամբ բաժիններէ բաղկացած կալուածներն 2697,85 օսմ. ոսկիի արժէքով՝ որոնցմէ ոմանք զուրկ են օրինաւոր կալուածագրերէ, եւ հետեւաբար ապագային զանազան դժուարութեանց եւ պատահականութեանց ենթակայ (տես մանրամասնութիւնները Երուսաղէմայ Ս. Պատրիարքին 6 փետ. 1908 թուական տեղեկագրին մէջ):

Յանձնաժողովս ընդունելով այն ամէն նկատողութիւնները՝ որոնք այս մասին ցոյց տրուած են նախորդ վարչութեան Ատենագետաց Մասնաժողովին 2 օգոստոս 1908 թուական տեղեկագրին մէջ, նաեւ,

Նկատելով որ՝ վերոյիշեալ կալուածներէ մի քանիին փոխարժէքը Տ. Ղեւոնդ Վ. գնազան հաշուեցոյցերու մէջ տարբեր տարբեր ցոյց տուած է, գնմանը ըստ իր սովորութեան կը որ գումարներու վերածելու համար քմածին տոկոսներ բարդելով (տես նոր շինութեանց տոկոսներու համար ներկայացուցած հաշուեցոյցին վերջին երեսը):

Նկատելով որ՝ Տ. Ղեւոնդ Վրդ. սոյն կալուածները եթէ նոյն իսկ իր անուան գրնած ըլլար՝ պարտաւոր էր ըստ միաբանական կանոնագրի Տրդ. յօդուածի՝ կանխաւ զեկուցանել Ս. Աթոռոյ Վարչութեան եւ կատարել նոյն յօդուածին ի՛նչ ի՛նչ տրամադրութիւնները,

Նոյնութեամբ կ'ընդունի յիշեալ Մասնաժողովոյ եզրակացութիւնը և անոր պէս արժան կը դատէ որ նախորդ Ելեւոսից Տեսուչ Տ. Ղեւոնդ Վ. Մագսուտեան կատարէ միայն Միաբանութեան ընդունած կալուածներու փոխանցումը գրեւոր սուղելով, իսկ մերժուածներուն փոխարժէքը վերադարձնէ Սուրբ Աթոռոյ:

Ծ. — ՊԱՀԵՍԻ ՄԵՏՈՒԿ

1900 տարւոյ մարտ ամսոյ սկիզբը, երբ Աղեքսանդրիոյ գետնին վաճառուէն զոյացած դրամով Վանքին պարտքը ամբողջապէս վճարուած էր, Տնօրէն ժողովը կ'որոշէ 5էն 10,000 լիբայի փոխառութիւն մը ընել իբր պահեստ և անոր համար մասնաւոր հաշիւ մը բռնել:

Նախորդ քննիչներու տեղեկագրերները իրաւամբ կը դիտեն թէ այդ որոշումը երեք անդամոց ներկայութեան տրուած է, եւ ատենագրութիւնն ստորագրած է՝ վասն Ատենագրի՝ Եղիշէ Վրդ. որ այն ատեն անդամ չէր:

Նոյն իսկ Տնօրէն ժողովն ամբողջապէս եթէ ներկայ ըլլար՝ դարձեալ այսպէս որոշում մը ապօրինաւոր պիտի ըլլար՝ որովհետեւ ըստ կանոնագրի թէպէտէ Տնօրէն ժողովը իրաւունք ունի փախառութիւններ կ'ընքելու՝ սակայն պարտաւոր է անոնց պէտքն ու պայմաններն որոշել: Վերոյիշեալ որոշման մէջ ոչ պէտքը արդարացուցուած է և ոչ պայմանները որոշուած: Գումարին քանակութիւնը անորոշ է, իսկ պահեստի դրամ անուանեալ՝ փոխառութեամբ ստացուած

գումար մը՝ բառերուն նշանակութիւնը մի- ամտօրէն փոխել է՝ որով ծիծաղելի պիտի ըլ- ան որոշողները, եթէ կարելի է այսպիսի ա- ծականով մը բառականա՛յ ա՛յն դառն հե- տեանքներու հանդէպ զոր այս խարդախ ո- րոշումը առաջ բերաւ :

Որոշման վերջին բառերն են մասնաւոր հաճիւ մը բռնել : Ասիկայ կը նշանակէ վան- քին տոժարաց մէջ չ'արձանագրել, այսինքն Ղեւոնդ Վրդ.ի յանձնել գումարը եւ թողուլ որ ինչ որ կուզէ ընէ այդ դրամով :

Եւ ահա գործողութիւնն է որ կ'սկսի :

Ճիշդ 1 Մարտ 1900 թուականաւ 10395 լիրա 15 զրշ՝ 24 անձերէ փոխ կ'առնուի եւ տարին չլրացած՝ 1054 լիրա 84 զրշ : նորէն կ'առնուի, այնպէս որ արտօնեալ 10,000 լի- րան արդէն 11,450 լիրա է իրր մայր դրամ, մէկ տարին չը բոլորած, գրեթէ ամբողջ 4 0/0 տոկոսով : Ապրիլ 20, 21 և Մայիս 3, 4ին մաս առ մաս Բռնէտի Լիօնէին կը յանձնուի զրամը՝ սակայն Մարտէն մինչեւ Ապրիլի վերջ երկու ամսոյ միջոցին որո՛ւ քով մնաց, ո՛ւր պահուեցաւ, տոկոս չը բերա՛ւ, այս բա- ները հարցնող մը չկայ, ապա վանքին դէմ բացուած դատի մը պատճառաւ, որպէսզի մի գուցէ գրաւուի՝ կ'ստիպուին պանքայէն քաշել պայմանաժամէն առաջ եւ ի հարկէ աննպատակ պայմաններով, և դրամը ուր փախցնելնին չգիտնալով փոխ կուտան Յու- նաց Վանքին՝ բաց պօստներով (au porteur) որով փոքր արկածի մը ենթարկեալ՝ կը վը- տանքի ազգին դրամը :

1901 Յունիս 22ին Պատրիարք եւ Տնօ- րէն ժողով ամէնքն ալ առանձինն առանձինն ստորագրելով՝ կը յայտարարեն առանձնաբո- թենէ տարբեր տետրակի մը մէջ թէ որոշ- մանց համաձայն է այս եղած գործողութիւ- նը, թէպէտեւ փոխ առնուած գումարը զգա- լի կերպով առաւել էր որոշուածէն : Անկէ վերջ Ղեւոնդ Վրդ. յանդգնօրէն կը շարու- նակէ անդադար փոխ առնել, պարտապա- հանջներու թիւը հարիւրի կը մօտենայ և պարտամուրհակները կը նորոգուին՝ շարու- նակ տոկոսը վրան բարդելով, այնպէս որ 1904 դեկտ.ի վերջ 83 հատ պարտամուրհա- կով վանքը կը պարտի 32,302 լիրա 14 1/4 զրշ : գրեթէ ամբողջը 4 0/0 տոկոսով : Ղեւոնդ Վ. ճարպիկ հաշուագիտութեամբ այս գումարը կը ցրուէ հաշուոց մէջ, մաս մը փոխ կուտայ

նոր շինութեանց հաշուոյն Լ. Օ. 9479.44, մաս մը Ելեւմտից Սնտուկին, առնք իրա- րու տոկոս կուտան եւ վերջապէս պահեստի սննուկի հաշիւը կը փակուի 1904 դեկտ.ի վերջ, սակայն փոխառութիւնք կան եւ կը մնան :

Այս 83 հատ պէսպէս պարտամուրհակ- ներու գոյութիւնը չ'կրնար սակայն կասկած չ'տալ Յանձնաժողովիս՝ թէ ասոնցմէ զատ ուրիշներ ալ չ'կան եւ թէ տոկոսաւոր պար- տուց գումարը ճշմարտապէս 22,302 լիրա 14 1/4 զրշ : էր 1904 տարւոյ վերջ : Արդարեւ սոյն թուանշանները քաղեցինք պահեստի սննուկի հաճիւ անունը կրող մասնաւոր տետ- րակէ մը՝ որ բնաւ հաշուետուարի մը կեր- պարանքը չունի : Ասիկա՝ պարզապէս պար- տամուրհակներու ցուցակ մ'է և իւր վերջին էջերուն մէջ կը պարունակէ հաշուեկշռի ձե- ւով համառօտութիւններ և ամփոփումներ՝ որք յայտնի կերպով վերջէն յօրինուած են՝ և որ չեն պարունակեր պարտամուրհակաց ամբողջութեան ամփոփումը :

Այս՝ այն տետրակն է որուն համար ըս- ուած է նախորդ տեղեկագրերու մէջ թէ թուահամարներու քերթուածներ կան, և թէ՛ թուականներու յեղաշրջումներ կը պա- րունակէ, այս պատճառաւ է որ Յանձնաժողովս ալ կը կասկածի այս արձանագրութեանց ստուգութեան, եւ վստահ չէ թէ ի չըջարե- րութեան գտնուած պարտամուրհակները հա- մաձայն են այս ցուցակին, նա մանաւանդ երբ նկատուի թէ տոկոսաւոր հաշուոց մէջ թուականները մեծ կարեւորութիւն ունին :

Յանձնաժողովս՝ նկատելով որ այս առ- մարը իրր հաշուական տուժար չկրնար ըն- դունուիլ եւ թէ Ղեւոնդ Վրդ. ըստ որոշ- ման պարտական էր կանոնաւոր հաշուետո- մար ունենալ՝ որուն մէջ բանած տոկոսներ միանգամայն որոշ կերպով գտնուէին, մա- նաւանդ ասանկ կարեւոր գումարի մը հա- մար, զինքը պատասխանատու կը ճանչնայ այս զեղծումին մասնաւորապէս, եւ ամէն ստորագրողները՝ որոնց գլուխն է ինքն եւս՝ ընդհանրապէս :

Բացի 1893-1904, 12 տարուան մատակարարութեան հաշիւներէն, որոնց մասին Յանձ- նաժողովս իւր քննութեանց արդիւնքը վերը՝ իւր պատկանեալ բաժնին մէջ ցոյց տուաւ, Յանձնաժողովոյս քննութեան ենթարկուած են 1905-1908 եռամեայ շրջանի մատակարա- րութեանց միաբանական Ընդհ. ժողովոյ կողմանէ վաւերացեալ հաշուեցոյցերն և 1908-1909 տարեշրջանի համար կազմեալ Ելմտացոյցը :

Յետ քննութեան տեսնուեցաւ որ .

1905—1906 տարւոյ մուտքն եղած է	Լ. Օ.	6369. 92
Ելքը	»	9139. 05
Որով այս տարուան բացը	»	2769. 13
1906—1907 տարւոյ մուտքը	»	11891. 51
Ելքը	»	11358. 34
Որով այս տարուան հասուցից առաւելութիւնն է	»	533. 17
1907—1908 տարւոյ մուտքը եղած է	»	9919. 75
Ելքը	»	10382. 01
Որով այս տարուան բացը	»	462. 26

զեղչելով 1906—1907 տարեշրջանի հասուցից առաւելութիւնը միւս երկու տարիներուն բացերու գումարէն՝ կը տեսնենք որ սոյն եռամեայ շրջանի մէջ 2698 Օսմ. ոսկիի բաց մը գոյացած է, որ բարդուած է վաճառի արդէն մեծ գումարի մը յանգած պարտուց վրայ :

Նաեւ բաղդատելով վերջին 4 տարեշրջաններու տոկոսաւոր պարտուց քանակը, կը տես- նեմք թէ նախորդ Ելեւմտից Տեսուչ Տ. Ղեւոնդ Վրդ.ի գործէ քաշուելու թուականին, այն է

1905 Ապրիլ 30ին տոկոսաւոր պարտքն էր	Լ. Օ.	14034. 64
Պահեստից հաշուոյն պարտամուրհակներով	»	9691. 92
Գումար	»	23726. 56
Որ մէկ տարուան մէջ աւելնալով	»	1609. 61
1906 Ապրիլ 30ին եղած է	»	25336. 17
մէկ տարուան մէջ աւելնալով	»	693. 93
1907 Ապրիլ 30ին եղած է	»	26030. 10
մէկ տարուան մէջ աւելնալով	»	534. 87
1908 Ապրիլ 30ին եղած է	»	26564. 97

Երեք տարւոյ շրջանի մէջ տոկոսաւոր պարտքը 2838 Օսմ. լիրա աւելնալէ զատ՝ երբորուն եւ անտոկոս պարտուց քանակը, որ 1904—1905 տարեշրջանի վերջը 1057 Օսմ. ոսկի էր, 1907 տարեշրջանի վերջ 3131 Օսմ. լիրայի յանգելով՝ նա եւս աւելցած է 2074 լիրա, որով սոյն եռամսեայ շրջանի մէջ տո- կոսաւոր եւ անտոկոս պարտուց յաւելումը եղած կըլլայ 4912 Օսմ. լիրա :

Բայց ինչպէս վերը տեսանք, յիշեալ 3 տարւոյ իրական բացը 2698 Օսմ. լիրա ըլլա-

լով, կը հասկցուի թէ վերագրեալ 4912 Օսմ. լիրա յաւելեալ պարտուց փոխարէն Ս. Ա- թոռոյ դրամն եւ գոյքը ու պահանջն ալ սոյն եռամսեայ շրջանի մէջ 2214 Օսմ. լիրայի յա- ւելում մը ունեցած են :

Հաշիւներուն քննութեան վերահասու ըլլալով որ Սուրբ Աթոռոյ վարչութիւնը սոյն 3 տարւոյ շրջանին մէջ թիւ 86 Մեծ Օթէլի անգանձելի մնացած չորս տարուն վարձուց փոխարէն 1906ին 3875 Օսմ. լիրա գանձելէն զատ նոյն օթէլին մինչ 1909 տարւոյ փետ.ի

վերջ տասնամյակն 550 օսմ. ոսկի վարձքն ալ կանխիկ գանձած, որով եռամեայ շրջանի հասութից քանակը արտաքոյ կարգի առաւելութիւն մը ունեցած է, Յանձնաժողովս ուզեց հասկնալ թէ՛ հակառակ հասութից սոյն առաւելութեան ինչպէս կըլլայ որ դարձեալ 2698 օսմ. լիբայի բաց մը կը գոյանայ և քննելով տեղեկացաւ որ Երուսաղէմի և Յոպպէի դիզեալ կալուածական տրոց համար սոյն եռամեայ շրջանի մէջ 1491 օսմ. լիբա վըճարելէն զատ Երուսաղէմի, Յոպպէի եւ Իսմազիտի մէջ ի հիմանէ նորոգեալ կալուածոց համար 1670 օսմ. լիբա ծախք եղած, նաեւ 303 լ. օ. վճարուելով ճառների մէջ 9 տէօնիւմ գետնի մը կէսը յանուն Ս. Աթոռոյ գնուած է: 1905—1907 երկամեայ շրջանի տեղեկագրին մէջ թէպետեւ վերոյիշեալ գնումէն զատ, նաեւ Լիֆթայի մէջ մի քանի կտոր հողային կալուածներու, և մին Յովհաննու Մննդեան կոչուած ճանապարհին մէջ 15000, միւսը ճառների մէջ 5000 կանգուն ուրիշ երկու գետին ծախու առնուած ըլլալը յիշուած է, բայց ո՛չ տեղեկագրին եւ ո՛չ ալ հաշուեցոյցներու մէջ ասոնց արժէքը նշանակուած չըլլալով, սոյն վերջին գնումներու կարեւորութեան աստիճանը հասկնալ կարելի է եղած:

Բաղդատելով վերոգրեալ գումարները կը տեսնեմք որ 4325 օսմ. ոսկւոյ բացառիկ հասոյթի մը փոխարէն Ս. Աթոռոյ վարչութիւնը, կալուածական տրոց եւ նոր շինութեանց եւ հողային գնումներու համար 3464 օսմ. լիբայի բացառիկ ծախք մը ըրած է: Ասով հանդերձ Յանձնաժողովս դիտել կուտայ թէ երբ մի կողմանէ Ս. Աթոռոյ տոկոսաւոր եւ անտոկոս պարտուց քանակը օր աւուր աւելնալով 29696 ոսկւոյ կը յանգէր, վանական վարչութիւնը փոխանակ նոր ի նորոյ շինութիւններ ընելու եւ հողեր գնելու պարտական էր հասոյթները սոյն պարտուց վճարման յատկացնելով, և ընդհ. մատակարարութեան յձախուց մէջ շատ տարիներէ ի վեր սովորութիւն դարձած շաղկապեանց վերջ տալով, կարելի եղածին չափ պարտքը թեթեւցնել, ինչ որ ցաւի սիրտ կը տեսնենք թէ չէ ըրած, ընկիւնքալ չունի ցորչափնոմոզում չգոյացնէ թէ պարբերական պարտուց գոյացումը եթէ մեծ մասամբ զեղծումներէ և յոռի մատակարարութենէ առաջ եկած է, կալուածական մեծամեծ շինութիւններն և

հողային գնումներն են որ այդ զեղծմանց դուռ բացած և բարոյական և նիւթական մեծամեծ վնասուց տեղի տուած են:

Վերոյիշեալ եռամեայ շրջանի հաշուոց քննութեան առթիւ Յանձնաժողովոյս ուշադրութիւնը գրաւած է նաեւ թիւ 86 Մեծ Օթէլի չորս տարուան յետաձնաց վարձուց և անոնց բռնած տոկոսներու 120000 ֆր. գումարի փոխարէն 90,000 ֆր. գանձուելով և 3000 ֆր. արժէքով ինչ ինչ կարասիներ ստանալով, վարձակալին և անոր երաշխաւորին հաշիւը փակուած ըլլալու խնդիրը: Սոյն խնդրոյ առթիւ Յանձնաժողովոյս արած մաղբութեան տակ գտնուած գրութեանց քննութենէն հասկցուեցաւ թէ վերոյիշեալ օթէլի վարձակալ Եագուպ-Շալ կոչուած անձը ըստ պայմանագրութեան 1902 Յունիս 1էն մինչեւ 1906 Մայիս 31, չորս տարուայ վարձքերը եւ անոնց 7% պայմանեալ տոկոսը առանց վճարելու օտար երկիր մեկնած ըլլալուն, երաշխաւորին Պաուս Փօն Ուսթինօֆի դիմում եղած է, եւ յետ երկար բանակցութեան՝ որոյ մէջ զլիսաւոր դերը Պրն. Սրապիոն Մուրատեան ազգայինը կատարած է, կարելի եղած է համաձայնութիւն գոյացնելով պանդոկը պարպել տալ և յիշեալ Ուսթինօֆի մի յայտարարութիւնը ձեռք ձգել, որով նա յանձնառած է Եագուպ-Շալի պարտական վարձքերը որոշեալ կարճ պայմանաժամի մէջ վճարել, իսկ հակառակ պարագային իւր ի Յոպպէ գտնուած կալուածները վանքին փոխանցել: Արդ՝

Նկատելով որ՝ ի ձեռքին գտնուած պայմանագրութենէն զատ յիշեալ Պրն. Ուսթինօֆը յայտարարագիր մը տուած է՝ որով պայմանագրին օրինական թերութիւնները եթէ իրօք կային, լրացած կրնային համարուիլ, և եթէ մինչեւ իսկ դատի ալ ձեռնարկել պէտք ըլլար, յիշեալ Ուսթինօֆը բազմահարուստ կալուածատէր մը ըլլալով կարելի էր վանքին պահանջը՝ հանդերձ դատական ծախիւք ամբողջովին գանձել:

Նկատելով որ՝ եթէ նոյն թուականին վանքին դրամական անձկութեան մէջ ըլլալը իրաւ ալ ըլլայ, կարելի էր տոկոսաւոր փոխառութիւն կնքել, ինչ որ նոյն տարիներու ընթացքին շատ պարագաներու մէջ ըրած է վանական վարչութիւնը, և

Նկատելով որ՝ յիշեալ Պաուս Ուսթինօֆի 120,000 ֆր. գումարը ամբողջովին վըճարուած, բայց անոր 30,000 ֆր. բայց գործին միջնորդող անձերու ձեռք անցած ըլլալը ինչ ինչ կողմերէ կը յայտարարուի:

Յանձնաժողովս այս տեսակ զեղչի մը հաւանութիւն յայտնած ըլլալուն համար Տընօրէն Ժողովը բարոյապէս պատասխանատու կը գտնէ:

7. — ԵՂՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յանձնաժողովս՝ տուեալ սահմանաց մէջ կատարած իւր քննութիւնները խտացնելով կը հասնի հետեւեալ եղբակացութեանց.

1. — Կը հաստատէ թէ Միւր. Ընդհ. Ժողովը բարոյական պատասխանատուութեան մեծ բաժին ունի՝ քանի որ վերին հսկողութիւնն ի գործ չէ դրած վանքին վարչական մեքենային վրայ, այլ միայն բաւականացած է պղտոնական տրտունջներ ունենալ ինքն իր մէջ՝ առանց ի հարկին եւ ի ժամանակին դիմելու Ազգային Կեդրոնական Վարչութեան վերին իշխանութեան, ի դարման չարին:

Պահեստից կրկին տոկոս թիւ 16 պարտավորական	1. 0.	30. 88
Ցուցակը կորսուած ծախք	»	65. 14
Որմնադիր Մարգարին բաշխուած 10 գաղղիական ոսկի	»	8. 80
Կանթեղի համար Սայատօֆի նուիրած 200 մանէթը	»	21. 29
Պատկերհան Ճգնաւորեանի դրամը	»	400. 00
Գէորգ Եպիսկոպոսի տուած դրամը	»	350. 00
Արթինօֆի բաշխուած դրամը (պարտավորական պարտքը)	»	774. 03
»	»	1650. 14
»	»	138. 40
Նոր շինութեանց հաշույն պարտքը	»	2697. 85
Նոր գնեալ կալուածք անընդունելի	»	9479. 44
Պահեստից դրամէն առածը	»	13,965. 83

4. — Կը հաստատէ թէ՛ նախորդ Երուսաղէմայ Պատր. փոխանորդ Տ. Գէորգ Արք. Եպիսկ. Երէցեան ուղղակի պատասխանատուն է Կ. Պօլսոյ փոխանորդարանի իր իննամեայ պաշտօնավարութեան շրջանին յոռի մատակարարութեան՝ որու հետեւանօք իբր 1000 օսմ. ոսկի աւելի մտնուած է Երուսաղիմատան սովորական ծախուց մէջ: Նկատելի է նոյնպէս որ՝ ուղղակի իւր իրաւասութեան ենթարկեալ Ետի-Գուլէի և Եալովայի ազարակներն անխնամ թողուած եւ իրագոռ ապարդիւն եղած են, մինչդեռ քիչ մը խրդւածմիտ և հեռատես անտեսութեամբ կարելի

2. — Կը հաստատէ թէ՛ Տնօրէն Ժողովը, զուրկ օրինաւոր կազմութենէ, գոնէ փոյթ չէ ունեցած իւր պաշտօնավարութեան պարբերական համարատուութիւնն ընել առ Միւր. Ընդհ. Ժողովը. երեւոյթները փրկելու համար որոշումներ ձեւացուցեր է, բայց իրօք անտարբեր — չ'ըսելու համար մեղսակից — գտուեր է կարեւոր խնդիրներու մէջ զլիսաւոր դերակատարներու նկատմամբ, որով ծանր պատասխանատուութեան տակ կ'իյնայ Միւր. Ընդհ. Ժողովոյ առջեւ մասնաւորապէս, եւ Ազգ. վերին իշխանութեան առջեւ ընդհանրապէս.

3. — Կը հաստատէ թէ՛ Երեւմտեց նախկին տեսուչ Գեր. Տ. Ղևոնդ Վրդ. Մագսուտեան, իւր քմածին եւ անպատասխանատու պաշտօնավարութեամբ ո՛չ միայն բարոյական ծանր պատասխանատուութիւն մ'ունի, այլև վերել տրուած հաշուական բացատրութեանց հետեւանօք պարտի անպայման վանքին վերադարձնել 13,965. 83 օսմ. ոսկւոյ գումարն ըստ հետեւեալ ցուցակին.

Եր Ետի-Գուլէի ազարակին 7 տարուան արդիւնքը՝ 1758 օսմ. ոսկի, ինչպէս նաև՝ Եալովայի խանին վաճառման արդիւնքը 700 օսմ. ոսկի՝ ամբողջութեամբ հասցնել Ս. Աթոռ: Այս վաճառման մասին այս էր գոնէ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին յանձնարարութիւնը՝ իւր 5 Յունիս 1903 թուական պաշտօնագրով՝ ուղղեալ առ Տ. Գէորգ Եպիսկ. Երէցեան: Յամենայն դէպս Յանձնաժողովս պարտաւոր կը գտնէ զՏէր Գէորգ Արք. Երէցեան 105 ոսկւոյ վերել բացատրեալ գումարին հատուցման:

5. — Եւ վերջապէս Յանձնաժողովս կը հաստատէ թէ՛ վարչական անկանոնութիւն, կանոնադանցութիւն, թերի կամ կեղծ հաշուակալութիւն, հակակշռի պակաս, և Ելմտացոյցի անգոյութիւն կամ անգործադրութիւն՝ հաւասարապէս յառաջ բերած են վանքին արդէ տազնապալի վիճակն:

Զայտօրիկ յայտագրելով Պատկ. Ժողովոյդ՝

Մնամք խորին յարգանքով

Ա. Ե. Դ. Կ. Բ. Գ.

Նրուսադիմայ Հաւուց Բննիչ Խորհրդարանական Յանձնաժողովոյ

(Ս Տ Ո Ր Ա Ղ Ր Ո Ւ Ք Ի Լ Ե Բ)

ՅՈՎՍԷՓ ԵՌԵՍՈՒՅԵԱՆ ԼԵՒՈՆ ՍՍ.Ա.Թ.ՃԵԱՆ ՄԻՀՐԱՆ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
ԳԱՐԵԳԻՆ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ ՊԱՐԳԵՒ ՓԱՓԱԶԵԱՆ ՅԱԿՈԲ ԳՈՐԵԱՆ

Կ. Պոլիս
21 Մայիս 1909



